



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


891.99  
V-94



БИБЛІО  
ОВ 2011

ФГУПИРУ  
Бібліотека  
22  
ІКІДА  
64  
07.07.2011

Ե ՏԱՐ  
0V 2011



Պ Ե Պ Օ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Առաջին անգամ ներկայացրած է Թիֆլիսի քաղաքային  
Թատրոնում՝ 1871 թուի Ապրիլի 30-ին:



891.99  
U-94

4

¶ ½ ¶ 0

ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱՁՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

## ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

126

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Anand

ԹՇԻՓԼԻԶ  
ԱՐԱԳԱՏԻՎ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ  
ՊՈՒԷԿԻՆԸ ՓՈՂՈՑ, 12

1903

07 AUG 2013  
MS VOL 2

56312

«Պէսօ» կատակերգութիւնը և ույրուած և  
Մեծարգոյ Փարոն Գէորգ Զմշկնամին և  
տեղեալ յառաջարանով:

### Սիրելի Քէ՛ՌՓ

Դու վաղուց ինդրում էիր ինձ մէկ բան զրել Թատ-  
րոնի համար մեր Թիֆլիզի «Պատմութերէ» կեանքից:

Երկար ժամանակ ես չէի կարողանում գտնել նիւթի  
առարկայ, Թէեւ քո պատուէրը երբէք մտքից չէր հե-  
ռանում:

Բայց պատահմունքը վճռեց գործք:

Մէկ օր Թատրոնում ներկայացնում էին հանգուցեալ  
Փուղինեանցի Մօլիէրից փոխաղրած «ՎՈՒՐ ՏՐԱԲՎԻՍ,  
ՊԻՏԻ ՊՍԱԿՎԻՍ» կատակերգութիւնը, որի մէջ դու կա-  
տարում էիր Շամիրի ղերը:

Քո հագուստը, դէմքը, շարժուածքը, խաղը, ձայնը  
այն ղերի մէջ, յանկարծ մտքումն ծագեցին հարց ԹԷ  
ինչպէս կը վարուէր Շամիրի նման մարդն այնպիսի դէպ-  
քում, երբ մեր հարստահարողներից մէկը փող պարտ լի-  
նէր նրան եւ չկամենար ճանաչել իր պարտքը:

Պէսօի հիմը զցուեց, մնացածն ինքն ըստ ինքեան ե-  
կաւ. նամանաւանդ այնպիսի մէկ դիպուած, որ այն ժա-  
մանակներում ես անձամբ փորձել էի [մէկ հարուստ ինձ  
տուած խօսքն ուրացել էր], արդէն նախապատրաստել էր  
իմ զիստմ Պէսօի հակառակորդի պատկերը:

Կազմելով հետզնետէ երեւակայութեանս մէջ պիէսի կա-

Дозволено цензурою. Тифлисъ, 8 Апрѣля 1903 г.

պը եւ նրա հերոսների տիպերը, ես ի նկատի ունեցայ, որ  
այն դասի մէջ, որի գանազան ներկայացուցիչներին այս-  
տեղ արհամարհանքով անուանում են՝ «Պաժարնեկ», լուն,  
Հինգամակ, որոնք իրանց բարոյականութեամբ,  
Հինգամակ, կան մարդիկ, որոնք իրանց բարոյականութեամբ,  
մեծահոգութեամբ եւ վեհանձնութեամբ կարող են օրինակ  
լինել շատ եւ շատ բարձր դասին պատկանող մարդկանց:  
Այս պատճառով Շամիրի բնաւորութիւնը պիեսումս մար-  
մացաւ կալուլու մէջ. իսկ նրանից բարձր տիպը՝ միեւ-  
նոյն դասի, ես իմ կարողութեան չափ աշխատեցի ցոյց  
տալ Պէտօի մէջ:

Երբ ես մօտաւորապէս պատմեցի քեզ Պէտօի բովան-  
դակութեան գլխաւոր միտքը, այն օրից սկսած՝ զու եւ  
դեռք չկեր առար ինձանից. ստուերի պէս հետեւում էիր  
ծեռաց աշխատելով շուտով եւ շուտով հանել իմ գլխից քո  
սիրեկան Պէտօին եւ գրչի տալ իմ խօսքերը:

Եւ ահա 1870 թուի սկզբում, զու, ըստ սովորակա-  
նին, վեր առար թուղթ ու գրիչ, եւ ես սկսեցի Թելաղբել  
քեզ Պէտօն, որը թէեւ շուտով ընդմիջուեց, բայց յիշեալ  
թուի Յուլիս ամսին միեւնոյն ձեռով շարունակուեց եւ վեր-  
ջացաւ Կրծանիսում:

Թերթելով այժմ Պէտօի սկզբնական օրինակը, ես զըտ-

նում եմ, որ համարեա ամբողջ պիեսը քո ձեռքով է  
գրուած, բացի մի քանի տեսիլներից, ուր քո բացակայու-  
թեան ժամանակ օգնել են ինձ Պ. Զաքարիա Բարանա-  
սեանցը եւ մեր Թատրոնի տաղանդաւոր աշխատակից Պ.  
Ցովհաննէս Ամիրիկեանը:

Շնորհակալութիւն յայտնելով յիշեալ անձանց, նամա-  
նաւանդ Պ. Ամերիկեանին, որ ուրիշ շատ անգամ եւս  
օգնել է ինձ իմ Թատրեական ասպարիգում, ես չեմ կա-  
րող մոռանալ այն աշխատանքն ու անձնանուիրութիւնը,  
որ զու կրել ես՝ թէ ներկայ հեղինակութեան եւ թէ այլ  
գրուածներիս մեծ մասի մէջ: Բայց առայժմ խօսքս միայն  
Պէտօի մասին է:

Քանի եւ քանի անգամ՝ գործդ թողած, ամարային շոք  
պապանաքին, ոտով եկել ես եւ զնացել կրծանիս. քանի  
եւ քանի անգամ հետդ խորհրդակցել եմ, օգուտներ բաղել  
քո խորհրդակցութիւնը եւ ծանծրացրել քեզ իմ ծանր ու բա-  
րակ մասահաթներով. քանի եւ քանի անգամ ամբողջ ժա-  
մերով, գրիչը ձեռքիդ, անշարժ նստած ես եղել սեղանիս  
առաջ՝ ծնւացնելով քեզ մէկ գրող մեքենայ, երբ ես հեղի-  
նակելով՝ բոլոր իմ շարժուածների աղատութիւնն եմ վայ-  
ելու. քանի եւ քանի անգամ երբեմն արագութեամբ Թեր-

Թեր ես լցրել իմ խօսքերով եւ ստէպ-ստէպ համութիւնդ ցոյց տալով, ոյժ ես տուել ինձ շարունակելու, երբեմն էլ յօնքերդ տօթելով՝ կամ տասն անգամ կրկնել ես միեւնոյն վերջին խօսքերս, կամ լուռ ու մունջ մնացել, առանց մէկ բառ արտասանելու՝ կամենալով արգելք չդնել մտքիս ընթացքին։ Ո՞վ իմանայ՝ ինչ մտքեր են ծագել քո մէջ այն ժամանակ, ինչ մտքեր ես կլանել, ինչ մտքեր զոհել, երբ ես, ուղեղս փորելով, աշխատելիս եմ եղել իմ միտքն արտայատել, իմ խօսքերը գեղեցկացնել։ Միով բանիւ՝ քո կամքը ենթարկել ես իմ կամքին, քո սովորութիւններն իմ սովորութիւններին, քո ժամանակն իմ ժամանակին, քո աշխատանքն իմ աշխատանքին։ Եւ այս բոլորը, բոլորը միայն նրա համար, որ Պէտօն շուտով լոյս տեսնի, դու քո սիրեկան թատրոնի համար մէկ նոր պիհս ճարես։

Մտաքերելով անցեալը, մտաքերելով այն ժամերը, երբ Պէտօն գրգում էր, երբ մեր մտերիմ խօսակցութեան մէջ Պէտօից մենք անդադար անցնում էինք դէպի նրա եղբայրակիցները, նրանցից դէպի ժողովուրդը, ժողովրդից դէպի ազգը, ես խոստովանում եմ, որ այն ժամերը միշտ կը մնան իմ կեանքիս ամենաերջանիկ ժամեր։ Յիշում ես, սիրելի Գէորգ, այն առաւօտները, երբ ա-

րեգակը, գլուխը գուրս բերելով հեռու հորիզոնում, մէկ առանձին լոյս էր թափում ծառերի տերեւների ու դիմացի սարի վրայ, մինչդեռ հազարաւոր թոջունների կանուխ երգը շատ անգամ խօսքս բերանիս կիսակտուք թողնելով, տանում էր մեզ կարծես ուրիշ աշխարհ։ Յիշում ես բարեկամների այն փոքրիկ խումբը, որ շարունակ հաւաքվում էին իմ ընտանիքում, այն հանաքները, ծիծաղը, ուրախութիւնը, եազօրի երեւակայական «սարք օքանեց», Եօվանէի միանուը, խեղճ Եավանգուլի բայաթիները, ձկնորս Լօփիանի պարը, քո արհեստալի բարբարոսական եղանակով երգած՝ «Ի՞նչ ու ի՞նչ սկըսէած ետքին», Ամերիկանի երգերը, նրան ընծայած սարսափելի փունջը, եւ այլն, եւ այլն... Բոլորն ունէր իր գեղեցկութիւնը, իր հիացքը, մինչւ անգամ այն անտանելի սեւ միջատների անթիւ զօրքը, որ մոմի առաջ հաւաքուելով մեր գլխին, մանաւանդ քո զիմին, շատ անգամ առիթ էին լինում Պէտօի թերթերը ցիր ու ցան անելու։

Յիշում ես դու Թէլէթի այն բազմաթիւ ուխտաւորներին, որոնք կիւրակի առաւօտները ժամը չորսից սկսած, ներկայացնելով իրանցից մէկ գեղեցիկ գունաւոր ժապաւէն, անցնում էին մեր բնակարանի առաջից եւ բարձրածայն պատմում

միմնանց իրանց վշտերը: Քանի՛ իսկական Շուշան ու Կէ-  
կէլ, քանի՛ յատուկ Պէտք եւ կակուի ենք տեսել նրանց  
թւում: Ես երբէք չեմ մոռանալ այն խօսքերը, որ մէկ  
կին, նայելով մեր պատշգամբին, ասաց իր Ընկերունուն՝  
«Ե՛ստի մտիկ, սրանք բաղումն էլ դիւաններով ին, 'ես  
կի տանս մէ կոտրած սկամի էլ չունիմ», եւ այս դառը  
խօսքերը նա կնքեց ուրախ ծիծաղով, կարծես թէ խեղճի  
ուրախութեան աղբիւրը նրա խեղճութիւնը լինէր: Քանի՛  
արտայայտել նրանք արտայայտել նրանք, քա-  
նի՛ մտքեր են զարթեցրել նրանց գանգատները: Ճշմարիտն  
ասած, տեսնելով այդ մարդկանց, լսելով եւ համակրելով  
դրանց, հարկաւոր էր ինձանից շատ եւ շատ վարպետ  
նկարիչ, որ կարողանար արժանաւոր գոյներով նկարել  
դրանց: Բայց երբ մարդ, ապրելով ժողովրդի մէջ, նրա  
ուրախութեան հետ ուրախանում է, նրա տրտմութեամբ  
տրտմում, եւ այս զգացմունքները նա կարողանում է  
փոքր ի շատէ պատկերացնել, այդ էլ, արդարեւ, մեծ  
բաւականութիւն է:

Ինչ եւ իցէ, ժամանակը հասաւ. Պէտքն ներկայացրինք  
Թատրոնում առաջին անգամ 1871 թուի Ապրիլի 30-ին:  
Պէտք դերը դու ինքդ կատարեցիր եւ կատարում ես

ցարդ՝ թեմի վրայ: Դու տուիր նրան շունչ եւ կենդանու-  
թիւն, քո խաղը գերազանցեց գրուածքից. իսկ Պ. Ամերի-  
կեանը, որ ներկայացնում էր Պէտքի հակառակորդի պատ-  
կերը, եւ միւս մասնակցող անձննք իրանց հանձարաւոր  
խաղով օգնեցին մեզ աւելի պարզ ցոյց տալու հարատա-  
հարուած Պէտքի համակրական ողին:

Այն ծափանարութիւնը, այն ընդունելութիւնը, որ ա-  
ռաջին ներկայացման օրը ստացայ հանդիսականներից Թատ-  
րոնում, ես արդէն բաժանել եմ քեզ եւ քո ընկերների հետ:  
Այժմ թուր ինձ, սիրելի Գէորգ, խնդրել քեզ՝ ընդու-  
նել եւ այս նուազ նուէրս իբրեւ յիշատակ քո չափազանց  
աշխատութեան եւ հարկ՝ քո անսահման սիրոյն դէպի մեր  
թատրոնը:

Քո Գաբրիէլ Սունդուկեանց:

Թիֆլիս

6 Նոյեմբերի 1876

፩፻፭፻

## ԿԸՏԵԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԾՐՈՒՅԹՈՎ

Թիֆլիզի Թատրոն, 1871 թ. Ապրիլի 30-ին:

ԳՐԱԴԱՐԱՆ ԱՆՁԻՆՔ

ԱՐՈՒԵԹԻՆ, հարուստ վաճառական . Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆ +  
ԷՓԻՄԻԱՅ, Արութինի երկրորդ կինը . Տ. ԱՆԱՑԻՒ  
ՊԵՂՕ, ձկնորս . . . . . Պ. ԶՄՇՆԵԱՆ  
ՋՈՒԾԱՆ, Պէպօի մայլը, այլրի կին . Տ. ԱՐԱՄԵԱՆՑ +  
ԿԵԿԵԼ, Պէպօի քոյլը . . . . . Օ. ԹԱԳՈՒՀԻՒ +  
ԴԻՔՅ, Պէպօի ազգական . . . . . Պ. ՄԻԽԱՂԵԱՆՑ +  
ԿԱԿՈՒԼԻԼԻ, Պէպօի բարեկամ . . . . . Պ. ՄԵԼԻՔ-ՁԱՎԱՄԵԱՆՑ  
ԳԻԳՈԼԻ, Արութինի դուքնի աշկերտ . Պ. ՄԱՆԴԱԿՈՒՀԻՒ +  
ՍԱՄՍՈՆ, Արութինի տանու ծառան . Պ. ՏԵՐ-ԱՍՏՈՒՐԵԱՆ +

Երկու այլ ծառակ Արութինի տանը:

Առաջին եւ երրորդ արարուածները կատարվում են  
Պէտօի տանը, իսկ երկրորդը՝ Արութինի տանը:

Անցքը պատահում է թիֆլիզում 1870-ին:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՂ Ա.ՆՉԱՆՑ

ԱՐՈՒԹԻՆ. 60 տարեկան, միջին հասակով և կազմուածքով. երեսը կարմիր, լիքը և ածելած: Սկ ներկած կարձ մազեր, հաստ յօնքեր և խուզած բեխեր: Եւրոպական հագուստ: Ապիտակ շապիկ, գունաւոր փողպատ, նոյնպիսի ժիշտ և պանտալօն: Սկ սերթուկ և գլխարկ-ցիլինդր: Ոսկէ ժամացոյց ոսկէ շղթայով: Գործ է ածում գունաւոր մետաքսէ թաշկինակ, փոքրիկ գեղին սաթէ համրիչ և ծոցի մէջ պօրտմօնէ: Շարժուածքը, ման գալն ու խօսուածքը ծանր: Բատ երեսյթին պատուաւոր անձն:

ԷՓԵՄԻԱՅ. 30 տարեկան, գեղեցիկ և վայել-չակազմ կին, շէկ մազերով: Եւրոպական մօղայի ամենաշքեղ բաց-կապոյտ հագուստ, վրացնակ գրլիով (չիքիլայ, ոսկեկար ճակտի-աղլուխ և այլն): Զարդարուած է ոսկէ ժամացոյցով, երկար շղթայով և զանազան ակնեղիններով: Պարանոցին կարմիր բանտ: Խօսակցութիւնը, շարժուածքը և ման գալը արագ ու կրակոտ: Շատ է քրքրվում:

ՊԵՊՈ. 35 տարեկան, թուխ և գեղեցիկ գէմքով, բարձր հասակով, ամուր կազմուածքով և լայն կրծքով: Սկ կարձ մազեր, ճակտի վրայ բերած. բարակ յօնքեր և բեխեր. երեսն ածելած: Ունի երկու ձեռք թիֆլիզի բուն լոթու հագուստ՝ մինը

հասարակ, միւսը զարդի: Առաջինն է՝ չթէ կամ սպիտակ շապիկ, մուգ-կապոյտ դօշլուղ, սև զայթաւով բուրած, սև նաշուրի արխալուխ. Լէզզու սև նով շալից չօխայ առանց զարդարանքի. միւնոյն շալից լայն շալուար, ծայրերի ներսի կողմը զանգեալի մէջ չարչուրազով ամրացրած, սև զափաղաւոր լափաւով ամրացրած նեղ քամար. կարմիր մորթէ երշինսեր, արծաթէ նեղ քամար. կարմիր կուրքը սև զայթանով բոլորած. սպիտակ լամբակէ թաշկինակ: Զարդի հագուստն է՝ մերամբակէ թաշկինակ: Զարդի հագուստն է՝ մերամբակէ կամ մուգ-կապոյտ նաշուրի արխալուխ. սև մահուղից կարայ և լայն շալուար. Խարազի ինչ ամրից լայն շալուար, ծայրերը վերոյիշեալ ձեռվ ամրացրած. սպիտակ զափաղաւոր լափշինսեր կանանչ զայթաններով. Բուխարու սև գդակ, ծայրը կոտրած. Իմերէթու մետաքսէ գոտիկ. կապոյտ կոտրած. Թաշկինակ: Քայլը հաստատ, ձայնը բազրակէ թաշկինակ: Քայլը հաստատ, ձայնը քազզը և ազդու, շարժուածքն ու խօսակցութեան քազզը և ազդու, շարժուածքն ու խօսակցութեան ձերը բուն ժողովրդական: Միշտ գլխարկով, բացի նշանակած տեղերից:

ՇՈՒՇԱՆ. 50 տարեկան այրի կին. միջին հասակով և հաճելի դէմքով: Վրացնակ հասարակ հաւաքուստ: Մէտ տակ (ցածր կապած) գլուխ (սև հակտիգուստ, սպիտակ հաստ լաշաք, սև վաթաթելու): Սև տերնոյից կամ ալպակայից հասարակ դէրիայ, կուրքքը ծածկած: Հասարակ սև շալ: Տանից դուրս գնալու ժամանակ գործ է ածում սպիտակ դաշտական թիբայ:

ԿԵԿԵԼ. 18 տարեկան, միջին հասակով, թարմ, գրաւիչ դէմքով, սև երկար մազերով: Վրացնակ հասարակ հագուստ (հակտի-աղլուխ, չփիլայ, չթէ դէրիայ և այն): Զայնը քազզը, շարժուածքը համեստ:

ԳԻՐԾՈ. 65 տարեկան, միջին հասակով, մէջքը փոքր ինչ ծոած: Սպիտակ մազեր և բեխեր, երեսն ածելած: Վրացնակ հագուստ: Սպիտակ շապիկ, կուրքքը սև զայթանով բոլորած. սպիտակ դաւամբարէ կամ մուգ-կապոյտ նաշուրի արխալուխ. սև մահուղից կարայ և լայն շալուար: Խարազի սև լափշինսեր ցածր կրընկներով. Բուխարու սև գդակ, ծայրը ներս ծալած. հասարակ շալէ կամ կապոյտ զանաւուզէ գոտիկ: Գործ է ածում ձեռն հափայտ, քթախոտ և կապոյտ չթէ թաշկինակ: Ման գալը, շարժուածքն ու խօսակցութիւնը չափից դուրս դանդաղ: Միշտ գլխարկով և ձեռնափայտով:

ԿԱԿՈՒԼԻՒ. 25 տարեկան, հասակով փոքր ինչ ցածր Պէպօֆց: Երեսը կարմիր և գեղեցիկ. սև մազեր, ձակատի վրայ բերած. բարակ յօնքեր, բարակ բեխեր և նօսր կարճ միրուք: Թիֆլիզի բուն պաժարնու կամ կինսոի շքեղ հագուստ: Մաւի մորթէ մեծ գդակ Բագուի ձեի. կարմիր մետաքսէ շապիկ և դօշլուղ. կապոյտ կամ սև զանաւուզէ արխալուխ: Քօբաչու սև շալից կարճ և չաքերով չօխայ. միւնոյն շալից լայն շալուար, ծայրերը զանգեալում կամ պաճիճում բոլորովին ամրացրած:

Դօշուղը, արիստուխը և չօխան ամենաշքեղ ձեռք  
զարդարած են կլապիտոննէ լայն բաֆթաներով:  
Լէզզու երկար ճտերաւոր չուստիներ, բարակ ոս-  
կեթելով բոլորած. արծաթէ լայն քամար. Բաղ-  
դադի թաշկինակ: Զայնը, շարժուածքն ու խօ-  
սակցութեան ձեռքը կոշտ գլխարկով:

ԳԻԳՈԼԻ. 25 տարեկան: Վրացնակ հասարակ  
հագուստ: Սպիտակ չթէ արխալուխ, կրծքի կո-  
ճակները մէր զցած. սև մահուղից կարայ. նոյն  
մահուղից կամ սպիտակ պարուսինից շալուար.  
արծաթէ նեղ քամար. ձեռքին գլխարկ-փուրաշկայ:

ՍՍՄՍՕՆ. 18 տարեկան. սև երկար մազեր,  
եւրոպական ձեռվ սանդրած: Եւրոպական սպիտակ  
շապիկ. հասարակ չթէ արխալուխ, կրծքի կոճակ-  
շապիկ. նեղ քամար և գունաւոր նեղ շալուար:  
Յետոյ Զէրքէզի շքեղ հագուստ: Սօսմի ատլասէ  
արխալուխ, բոլոր կոճակները մէր զցած. սպիտակ  
մահուղէ չէրքէզկայ արծաթէ մասրաներով. նոյն  
մահուղից նեղ շալուար, ծայրերը կարմիր մահու-  
մահուղից նեղ շալուար. Բոլոր հագուստը զարդարած է կլապիտոննէ  
դով: Բոլոր հագուստը զարդարած է կլապիտոննէ  
բաֆթաներով: Եւրոպական վայլուն կօշիկներ.  
արծաթէ շքեղ քամար արծաթապատ դաշոյնով:  
Արծաթէ փոքրիկ վառօղաման կլապիտոննէ լայն  
բաֆթայով: Բոլոր ժամանակ առանց գլխարկի:

ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱՅՑ Փրակով, սպիտակ ձեռ-  
նոցներով և առանց գլխարկի:

## Պ Ե Պ Օ

### Ա Բ Ա Ռ Ո Ւ Հ Ա Ժ Ա Թ Ա Ջ Ի Ն

Բեմը ներկայացնում է հին ձեռք աղքատիկ սենեակ թարեքնե-  
րով, գոլարներով, լուսամտով և երեք գանով՝ աջ, ձախ և  
դիմացը: Չափ կողմը [հանդիսականների գիրքից] գորգով  
ծածկած տախտ նահալով և մութաքաներով, իսկ աշ՝ հա-  
սարակ սեղան, գունաւոր սփռոցով ծածկած: Սենեակի այս  
անկիմում մի թոկ կայ կապած: Գոլարներում և թարեք-  
ների վրայ դարսած են հինօրեայ պղնձէ, կաւէ ու փայտէ  
տամաններ և զանազան ձեռք զինու բաժակներ: Մի քանի  
հասարակ աթոռներ լրացնում են սենեակի զարդը: Կէսոր է:

### Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՇՈՒՇԱՆ, տախտի վրայ նստած, գուլպայ է գործում,  
Կէպէլ, սեղանի մօտ աթոռի վրայ նստած, շտապով  
կար է անում, առջեւը կարի գոյնզոյն բօխչայ:

ՃՈՒՃԱՆ  
Հիս իմանում, քա:

ԿԵԿԵԼ, ԹԵԼ ՎԻՐԳՆԵԼՈՎ ԹՈԽԾԻՅ:  
ԱՌ, ԷՍ ԷԼ ԱԼԲՆԻՄ, ՊԵՊԻ:  
ՀՈՒՂԱՆ  
ԹԱՌ, ՄԵ ՔԻՉ ԴԻՋԱԳԻ, ԲԻԺՈՒՄ ԱԼԲԾԻ:  
ԿԵԿԵԼ  
ՀՈՒՂԻ, ՊԵՊԻ, ԷՌ, յօՐԷՄ աԷՐԸ ԳՈՒ ՔԱՅ:  
ՀՈՒՂԱՆ  
ՆՐԱ ԱՃԼԻՆ ԷԼ ԿԱՐԻՄ. ԽԻՍՏ ՀԱՏ Է ՄԱԼԻ:  
ԿԵԿԵԼ  
ԲԱՆՆ ԷԼ ԷՄ Է, ԷՌ, ՊԵՊԻ. ԻՆՉՐՈՒ ՆՐԱ ԳԱԼԸ ՊԻՎ  
ՀԱՊԻՐ ՎՈՒՐ ՀԸԼԻ, ԷԼ թամամ գինը չի տա: ԽՕ ՊԻ-  
ԳԻՄ ԻՆՉ անսաստուծն է:  
ՀՈՒՂԱՆ  
ԱՄԱՐ, աճկիա լուսը խօ չիս կանա հանի. սաղ  
գիշիր, հէնց բանէ, չիս քնի ու ջեր\*) վուրդի էր  
ծէքը, վուր էլի բանի նստեցար:  
ԿԵԿԵԼ  
Ի՞՞ՆՉ անինք, ՊԵՊԻ, ԽՊՃԻ հացը էժան չէ ճար-  
վում:  
ՀՈՒՂԱՆ  
ՀԵՐԻՔ արա, հերիք, վուրթի: ԶԱՆԴԱՄԸ միր զը-  
լուխը, վունցոր ըլի կու ապրինք:  
ԿԵԿԵԼ  
ԷՍ ՍԱՀԱՄԹԻՄ, ՊԵՊԻ ջան, այ. ԱՍՏՈՒ գիղենայ,  
ՔԻՉ է մնացի:  
ՀՈՒՂԱՆ  
ՍԱՊ ԳԻՇԻՐ ջում-ջումի բերիք ինձ՝ դուն մէ կու-

\*) Ջեր—դեռ. Ջեր—անդամ:

ոը, քու ախպուր փիքը մէկէլը: (Լոռոթիւն:) Նա ԷԼ  
ԲԻՆՉ ԷԼԱՒ. ԽՄՔԻՆ ԲԱՆ ՀԸԼԻ ԷԿԻ ԳՈՒԽԱՐ:  
ԿԵԿԵԼ, վախեցած:

Ի՞՞ՆՉ ասում, ՊԵՊԻ. գանա ԷՍ անց ԷԼ ՉԷ մնացի  
դուսը գիշիրով:

## ՀՈՒՂԱՆ

ԷՍՈՐ ԽԻՍՏ ուշացաւ, ԿԵԿԵԼ. առանց ԷՆ առուտ-  
նիրը տուն է ԷԿԻ ու հիմի յօրէս կէսօրի վուխան է:  
ԿԵԿԵԼ

Ի՞՞ՆՉ հաջաթ, ՊԵՊԻ ջան. Էպէրա փողոցումը բան  
լուս ննգաւ:

## ՀՈՒՂԱՆ, յոգւոց հանելով:

ԱՍՏՈՒ անէ էսէնց ըլի, վուրթի. սիրտս գնում  
ու գալիս է... ՈՎ գիղէ ջուրը մինձացաւ, ով գիղէ  
իմքնի էդնէն ննգաւ ու ինքն ԷԼ հիդը գնաց...  
ԿԵԿԵԼ

ԷՌ, ինչեՌ իս ասում, ՊԵՊԻ:

## ՀՈՒՂԱՆ

ՆՐԱ ԳԼԽԻՆ ԷԼ ՎՈՒՐ մէ բան գայ, ջուրն ածելու  
կու գառնանք:

## ԿԵԿԵԼ

ԱՍՏՈՒ գիղենայ, անմիղ իս նիդանում, ՊԵՊԻ  
ջան. էրեխայ խօ չէ, սիրտս էլ անմիղ շուռ ու մուռ  
իս բերում:

## ՀՈՒՂԱՆ

ԷՌԱՆ ԷԼ ապրիլ կուլի՛... Հախմիան Տէրն անէ  
քու գաղաստանը, ԱՌՈՒԹԻՒն:  
Գրսից ոտի ծայն է լսվում:

ԿԵԿԵԼ, ուրախ:  
 Այ, դէղի, յօլէն:  
 ՃՈՒՃԱՆ, ականջ դնելով:  
 Նո է... (Գլուխը շարժում է...) 2Ե:  
 ԿԵԿԵԼ, նմանապէս ականջ դնելով:  
 Գիքօն է:

## ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ, ներս մտնելով դիմացի դռնից, զլսարկը ծածկած  
 եւ ձեռնափայտով:

Բարի լուս ձիգ:  
 ՃՈՒՃԱՆ, տխուր:

Աստծու բարին, Գիքօ... Համեցէք:  
 ԿԵԿԵԼ, վեր կենալով, Գիքօին զլուխ է տալս, յետոյ  
 առանձին:

Աճկս քիշ էր մնում:  
 Նստում է իր զործին:

ԳԻՔՕ, նստելով աթոռի վրայ Շուշանի մօտ:

Վունց իք, ինչ բարին հարցնինք:  
 ՃՈՒՃԱՆ

Փառք Աստծու, կանք:

ԳԻՔՕ

Ե՛, վառք Աստծու: Էս ուր է Պէպօն. Ճիր չէ  
 տուն էլլի:

ՃՈՒՃԱՆ, վախեցած:  
 Հըա, իմքին խաբար կայ:

## ԳԻՔՕ

Հա, բան ունիմ ասելու:  
 ՃՈՒՃԱՆ, ծնկանը խփելով:  
 Վու, քոռանամ 'իս, \*) ինչ խաբար է:  
 ԳԻՔՕ, ուղղուելով:  
 Ի՞նչ խաբար...

## ՃՈՒՃԱՆ

Հա:  
 ԳԻՔՕ

Լաւ խաբար չէ, Ճուշան:  
 ՃՈՒՃԱՆ, աւելի վախեցած:  
 Ի՞նչ է, խիխտվիլ է:  
 Կէկէլը, կարը թողնելով, վախեցած նայում է  
 նրանց:

ԳԻՔՕ, զարմացած:

Ո՞վ է խիխտվի. ինչ իք ասում:  
 ՃՈՒՃԱՆ

Պէպօն. բաս չէ խիխտվի:  
 ԳԻՔՕ, երեսը խաչակնքելով:

Տէլ օղորմած Աստծու. Էտ 'ես չիմ իմանում, ինչ  
 իք ասում:

## ՃՈՒՃԱՆ

Ախար, իրիգուն կէս գիշիրին դամբը վիկալաւ,  
 գնաց ու չեր չէ տուն էլի:

\*) Ե տառը մակակէտով նշանակած (Շ) պէտք է աբտա-  
 սանել իսկ և իսկ այնպէս, ինչպէս աբտասանվում է յի վան-  
 կը՝ բառի միջում կամ վերջում, ձայնաւորից յետոյ. օրինակ՝  
 Մա յիս, Գա յի անէ, երկնա յին, եսա յի, և այն:

## ԳԻՔԾ

Վա, օխնած հոքի, վախեցայ. նա ի՞նչ խիստավելու  
ահ ունէ... էն ի՞նչ Քուռը պիտի ըլի, վուր նրան  
ախտէ:

## ՃՈՒՃԱՆ

Բաս ի՞նչ խաբար էիր ասում:  
ԳԻՔԾ

Ի՞նչ խաբար էի ասո՞ւմ...

## ՃՈՒՃԱՆ

Հա, մէ շնուր ասա, թէ Աստուձ կու սիրիս:  
ԳԻՔԾ

Մալափ, է. մէ քիչ համմիիրութին ունեցի, հէք  
օխնած: Աստուձ շատ բանիր է զրի մարթու ճակտին՝  
վախտ կայ ուրախութին, վախտ կայ տիրութին:  
Գրախնից հանում է քթախտի տուփը:

ԿԵԿԾ, առանձին:

Ի՞նչկի կ'օսէ, իմն ինձ կու հասնի:  
ՃՈՒՃԱՆ

Միդ համա խօ դարթնի տիրութինը Աստուձ ու-  
րիչ բան չէ տվի:

## ԳԻՔԾ

Ի՞նչ անխս, Ճուշան, Աստծու ձեռին է՝ ուրախու-  
թինն էլ, (Յօրանջում է:) տիրութինն էլ... (Կրկին  
յօրանջում է եւ քթախտ քաշում:) Հըմ... էմ... Վուն-  
ցոր Աստուձ գ'ուղէ, էնէնց կուլի մարթու բանը:  
ՃՈՒՃԱՆ

Նըա կամքն ըլի, ի՞նչ անինք:  
ԳԻՔԾ

Էտէնց է, էտէնց, Ճուշան... Ախար, էսօր առու-

տեհան լաւ բան չիմացայ. էլ չդնջացայ, ինչըու  
չպնացի ու ձիք փեսի հիդ գէմուղէմը շխօսեցայ: (Աէ-  
կէլին:) Զատ հարց ու բարով արաւ քիզ, այ, Կէկէլ:  
(Աէկէլը թէթեւ զլուխ է տակս Գիքօին, առանձին աչքերը  
սրբում է եւ կարը շարունակում:) Խիստ իմ կարօտի,  
կ'օսէ... (Քթախտ քաշելով:) Հըմ... էմ... էմ...

Կէկէլը նոյն միջոցին գարձեալ սրբում է աչքերը:  
ՃՈՒՃԱՆ

Հալեցիր ու մաշեցիր խօմ, Գիքօ. մէ ասա ու  
պլծի, էլի:

## ԳԻՔԾ

Է՛ս սահաթիս, էս սահաթիս, Ճուշան... (Քթախտ  
քաշելով:) Հըմ... հըմ... վօխակ... Աստուձ, վուր  
մարթուն սախութիլէ, համմիիրութինն էլ հիդն է տվի:  
Քիթը սրբում է թաշկինակով:

ՃՈՒՃԱՆ, առանձին:

Քու աճկն էլ:

ԳԻՔԾ, կրկին քթախտ քաշելով:

Հըմ... էն էի ասում, վուր, (Կամենալով փոշտակ:)  
վուր, վուր... (Փոշտում է:) ըա հըա... (Կրկին կա-  
մենալով փոշտակ:) Ըա ըա ըա... (Փոշտում է:) ըա հըա...  
Օ', հօ, հօ, հօ... ի՞նչ բուռնութի է. խէք էկաւ, այ:

ՃՈՒՃԱՆ

Առուխչ ըլիս:

## ԳԻՔԾ

Վուրթիքդ (Կամենալով փոշտակ:) ա ա ապրին,  
(Փոշտում է:) ըա հըա...

ՃՈՒՃԱՆ, առանձին:

Ա՛յ, չօռ ու ցաւ, թէ խօսիս:

## ԳԻՔՕ

Ես ինչ ու կէս... (Կամենալով փոշտալ:) Ես էլ, էլ...  
(Կրկին փոշտում է:) ըստ հըմ... Ես էլ ջուխա խէր...  
Կու'լի վիրչը խէր ըլի:

## ՃՈՒՂԱՆ

Քունը վունց խէրն իմացայ չեր ու վունց շառը:  
ԳԻՔՕ

Խէրն էլ ու շառն էլ Աստծու ձեռին է, Ճուշան:  
(Քթախտի տուփը զրպանը դնելով:) 0'հ, խիստ թէժ  
բունութի է էլի անիծածը: Հազրէնը մէ չէր չի  
պատահի, վուր բունութու վրայ փոշտամ. ամա  
էրեռում է իմ սովոր բունութին չին տվի... Դաւ-  
բացաւ \*) աշխարքը, Ճուշան, ինչ անիս: (Տուփը  
կրկին հանելով զրպանից եւ բաց անելով:) Ի'մքին խօ  
չկայ մէշը խառը: (Տնտղելով:) 2Է, վունչիչ չէ էրե-  
ռում: Արա, Ճուշան, քու աճկը կու'լի ուփրօ լաւ ըլի  
կտրում:

## ՃՈՒՂԱՆ, առանձին:

Քու աճկի պիպիկն էլ կարիմ:  
ԿէԿէլ, առանձին:

ՊԱՌԻԺ:

## ԳԻՔՕ

Մէ տիս, Է, թէ Աստուձ կու սիրիս:  
ՃՈՒՂԱՆ, առանձին:

ԴԱՎԱՐ Է... (Առնում է տուփը եւ տնտղում:) Լաւ  
բունութի է էրեռմ. ամա, մէ ասա, թէ Ստիղծողը

\*) Գ. տառը թառով նշանակած (՞) պէտք է արտասանել  
որպէս Պարսից կամ Թուրքաց Յ կամ Վրացոց Յ:

կու սիրիս, ինչ խաբար իս բերի... Հոքէներուս իս  
հանեցիր:

Տուփը դնում է Գիքօի մօտ տախտի վրայ:  
ԳԻՔՕ

Տօ, ինչ խիստ իս շտափում: Մուլափ տանք,  
էպէրա Պէպօն էլ վրայ հասնի, նրա բանն ուփրօ է:  
Քիթը շարունակ սրբում է Թաշկինակով:  
ԿէԿէլ, առանձին:

Ճաշն էլ էստի է ուզում անուշ անի. մինք իս  
խիստ շատ ունինք ուտելու, մնացիլ էր սա:  
ՃՈՒՂԱՆ, առանձին:

Ը... Բարի-բան ննդնի քնթումդ, հըմ... (Գի-  
քօին:) Ախար, մէ խօսկ էլ է մայինց ասա:  
ԳԻՔՕ

Գիգիս ինչ է, Ճուշան. (Զայնը ցածրացնելով:) մէ  
ախչկատ դուս դրգէ ախար, Է:

ՃՈՒՂԱՆ, ցածր:  
Նա իր բանին է, ինչ կու իմանայ. ցածր ասա:  
ԳԻՔՕ

Վուր իմանայ, լաւ չէ, Ճուշան, Է. չիս գիգի թէ  
Խիկարն (Ցուցամատը մակատին տանելով:) ինչիր է ասում  
էստու վրայ:

ՃՈՒՂԱՆ  
Խիկարն ով է, քա. նա էլ խառն է էստումը:  
ԳԻՔՕ, ծիծաղելով:

Հը՛, հը՛, հը՛, հը՛... (Ծիծաղը դառնում է հազը)  
Հը՛, հը՛, հը՛, հը՛... (Ծիծաղը դառնում է հազը)

ՃՈՒՂԱՆ, առանձին:  
ԱՌ, Աստձու կըակ, թէ ասիս ու պրծնիս:

ԳԻՔՅՈ, հաղը շարունակելով:  
 Խիկաբը, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ... փիլիսոփայ... էր,  
 հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ... (ՊԵՊՈՆ կուկսի ետեւից երգում է՝  
 «Ճարաբի Ճամ շուգա ասթ»,  
 Ճուրհի նա դարադ, »)  
 ԿԵԿԵԼ, առաջ վազելով եւ ուրախ:  
 Այ, ՊԵԱԼՈՒ:

## ՏԵՒԼ Գ

## ՆՐԱՆՔ, ՊԵՊՈ

ՊԵՊՈ, երգը շարունակելով, ներս է մտնում դիմացի դռնից՝  
 զինարկով, հասարակ սեւ հաղուստով, թերերը յիս  
 ծալած, դամբը (ուռկան) ուսին եւ առջեւը գօտկից  
 կապած կարմիր թաշկինակում կենդանի ծիներ:  
 «Արադի քիշմիշ ասթ,  
 Բար դար փիալա,  
 Գեալ այլաշ:» \*)  
 ԿԵԿԵԼ,

Աճկներուս իսո ջուր կարեցիր, ՊԵԱԼՈ:  
 ԸՈՒԴԱՆ

Ինչի՞ գիղիս; տօ, կ'էհաս ու կու կորչիս:

\*) Պարսկերէն է. — Գինին Փամասկանի է եղել,  
 Կասկածանք չկայ,  
 Հիմքը քիշմիշել,  
 Վեր առ փիալան, (Վահացը)  
 Թուրքերէն է. — Եկ նստիր:

## ՊԵՊՈ, ուրախ:

Վա, Էսէնց վուր շանիմ, Աստուձ մանանայ իս  
 չէ զէվէր զրգում միզ համա... Օ՛, Գիքօ, լաւ վուխան  
 իս էկի: Մէ մուրծէք ուտեցնիմ քիզ էս սհաթիս,  
 վուր քէփդ գայ. ամա թէ քննէտ բուռնութի իս  
 կաթեցը վրէն, էլ մէ թիքա չիմ տուր տա, հըա...  
 (Հանելով մի մեծ ծուկը:) Աբան... (Զկան պոչով Գիքօի  
 թշերին խփելով:) Օ՛, չէնի կի ճիրի մէ... Մէ թամա-  
 շա արա, է:

## ԳԻՔՅՈ

Չանէս, չանէս, տօ:

Կէկէլը ծիծաղում է:

ՃՈՒՃԱՆ, ժպտալով:

Մէ մնւալի, տօ, բա դրօս հանաք է. բան էր  
 խօսում:

ՊԵՊՈ, թաշկինակը հաւաքելով եւ ծիծաղելով:  
 Բան էր խօսում. աւտաս խօսկը խօսկին կարկը-  
 տի պէս վրայ տայ: (Գիքօի ծախ կուռը բռնելով եւ ա-  
 մուր շարժելով:) Վանց իս, վունց, Գիքօ:

## ԳԻՔՅՈ

ԿՈՌՈՍ, կոՌՈՍ, տօ. Էրկաթ է մաջէտ:

ՊԵՊՈ, ծիծաղելով:

Բաս չէ ու քի պէս փափա կուլի: (Թաշկինակով  
 ծկները տալով Կէկէլին:) Աբան, Կէկէլ, էս տար մէ էնդի  
 ջնւըն ածա ու մէ կրակ էլ չաղ արա... (Ցածր ծայ-  
 նով:) Փէտ իս մնինք:

ԿԵԿԵԼ, ուրախ եւ ցածր:

Մէ էրկու վառելու էլի կայ: (Առնում է կապոցը:)  
 Մորթուալմ էլ:

## ՊԵՊՈ

ՀԷ, չԷ, չԷ, չԷ, Կակուլին աղանչաք արաւ, վուր  
նրան մուլափ տանք. խիստ է սիրում ձգան մորթի-  
լը: (Տաղելով ձուկը Կէկէլի ծեռքին, Թաշկինակի մէջ:) Մէ մաթիկ էս ըէձաթին՝ վնարդի է կուշ էկի, է...  
Տար, տար, 'ես սրանց հոքուն մեռնիմ: էս էլ վուր  
տառանց փուղ չըլի ճարգում, ո՞վ արժանի կ'օնէր միզ:  
(Իր ծոցին խփելով եւ Կէկէլին՝ ցածր:) Փուղ էլ ունիմ,  
Կէկէլ, այ. մի վախենա, հինգ մանէթի ծախսեցի:

ԿէԿէԼ

Էնդուր էլ ուշացմբ:

## ՊԵՊՈ

Վա... բաս... Մէ էս գիշեր էլ գնամ. Աստուծ  
աճկը քաղցրացըիլ է ինձ վրայ:

ԿէԿէԼ

Ալս, Պէպօ ջան, եարաք քանի չարչըրվիս միզ  
համա:

Դուրս է զնում ձախի\*) դռնից, տանելով հետը կա-  
րը, կարի թօխչան եւ Թաշկինակով ձուկը:

## ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, առանց ԿէԿէԼի

## ՊԵՊՈ

Ուրիշ, Գիքօ. ասա, է. փուղը լաւ է թէ ջանը:

\*) Աջ, ձախ՝ պէտք է ընդունել միշտ հանդիսականների գեր-  
քից նայելով:

## ԳԻԲՈ

Երկուսը մէտի լաւ է, Պէպան, թէ Աստուծ կու տայ:  
ՊԵՊՈ

Տօ, Էտղաղա տարի է ապլում իս աշխրքումն ու  
չիս գիզի, վուր փնտղը Աստուծ չէ բաժնում: Թող  
Աստուծ մենակ ջան տայ մարթու, փնտղ է ու փուղ:  
(Դամբը բաց անելով:) Փնտղով իմ առի էս: (Իր կրծքին  
խփելով:) ԱՇ, սազ լլի... (Խոցած, զամբը տնաղում է:)  
Օ՛, հօ՛, հօ՛, հօ՛... ինչ դամբ է. Էնդղաղա գցեցի,  
էլի սազ սալամաթ է մնացի... Պետրէ-Մօքէվի պէս  
արդ չի ըլի. փուում էի թէ չէ՝ զըմ-զլըմ, գուս էին  
գալի լօթիքը Խըլպըլտալի: Խալխը վուր խիք ունե-  
նայ, էս անց էլ բան ու գուրձ չի ունենայ: Էն վուր  
գցում իս... ու ինչըու գուս քաշիլը, սիրադ՝ զընդ-  
զլընդ, կ'օսիս թէ մահ ու կինքդ պիտի բաժնին: Թէ  
մութ գիշեր էլ է, հէնց գիղենաս ասաղիը հիդդ  
մասլահաթ ըլին անում, ու թէ լուս է խօմ՝ կ'օսիս  
լուսնիակը գլխիս փարվնի պէս կանգնած է լօթին...  
Եշխումն էլ վուր տուն իս զնում ու վուտնիտ էլ  
թաց է ըլում, ու մէ բաշ փուում իս... Օ՛հ, չընի  
կի ճիրի մէ... (Ճեռուից գցում է զամբը Գիքօի զլսին,  
Գիքօն մնում է մէջը: ) Օ՛հ, օ՛հ, օ՛հ... Գիքօ, ինչ ձու զն  
էս. արդի պղինձ պիտի քիզ:

Ծիծաղում է:

ՉՈՒՃԱՆ, ծիծաղելով:

Տօ, ըմ դրօս էտունք է:

ԳԻԲՈ, աղատուելով:

Տօ, վախեցայ, ԷՇ. էս ինչ հանգի հանաք է:

ՊԵՊՕ, դամբը հաւաքելով:  
 Բաս գիվ մէ զլուխ խօ չիմ լաց ըլի... Միրտս  
 վուր գարդին տուր տամ, լուրի պէս կու տրաքի:  
 ԳԻՔՕ  
 Հէ, մայինց, մէ քիչ անդնջում իս:  
 ՊԵՊՕ, դամբը թոկի վրայ փոելով:  
 Բաս չէ ու քի պէս հում-հում իրաշլամա կու'լիմ.  
 բուռնութին քնթէմէս ծլծլալի դէվէր ըլի գալի ու  
 ինչըու մէ բան ասիմ, ուխտի լօխմի պէս խօսկիրը  
 քելնումս ծամում ըլիմ... (Յիծաղում է:) Հա, հա,  
 հա, հա...

ՀԷՇ գիգի, ՊԵպան:

## ՃՈՒՋԱՆ

Տօ, քանի ասիմ, մէ անդաճ դի ախտը, է. սիրտս  
 շուռ էկաւ... Ինչոր վիս խաբար է իմացի միր վեսի  
 դէյիր:

ՊԵՊՕ, վախենալով:

Ի՞նչ վիս խաբար:

ՄԷ նստի, ՊԵպան, հէնց ապրիս:

Էսէնց էլ լաւ իմ, ասա:

Հէ, վուր նստիս, ուփրօ լաւ կու'լի:

ՊԵՊՕ, նեղանալով:

Տէր օդրմած Աստուձ: (Մօտ է բաշում մէկ աթոռ  
 եւ նստում Գիքօի ձախ կողմը:) Հը՛, էլ նստեցայ:

## ԳԻՔՕ

Մնալափ, է. տաքնալով բան չի դառնա ախար:  
 Պիտի վիքը անինք, թէ վնանց օտկինք բանին: (Որո-  
 նում է քթախոտի տուփը:) Ի՞նչ էլաւ, տօ, էստի էր:

ՊԵՊՕ, տուփը զոնելով եւ տալով նրան:

Հը՛, բանէ. ինչըու չբաշիս, խօ չիս կանա խօսի:  
 ԳԻՔՕ, վերցնելով քթախոտ:

Մ՛յ, ախագէր... Էսօր առուտեհան մէ վիս հուտ  
 իմացայ... (Բաշում է քթախոտը:) Հը՛մ... Միթամ ձիր  
 փեսի համա ուրիշ ախչիկ ին լուս գցի:  
 ՃՈՒՋԱՆ

Վ.՝, քոռանամ ՚իս:

ՊԵՊՕ, վախեցած եւ ձայնը երկարացնելով:

Է՛յ...

## ԳԻՔՕ

Բաս... Միթամ խիստ լաւ ախչիկ է, կ'օսէ, ու  
 վուղ ու բաժինքն էլ ձիր խոստացածի վրայ ուփրօ  
 շատ: (Կրկին վերցնում է քթախոտ եւ բաշում:) Հը՛մ...

ՊԵՊՕ, բարկացած:

Հը՛մ, հը՛մ. տօ, քաշէ ու պլծի, էլի... (Տուփը  
 խլելով՝ քթախոտը թափում է Գիքօի բուռը եւ այդպէս  
 մօտեցնում նրա քթին:) Հը՛, կշտացի:

## ԳԻՔՕ

Վա, վա, բնաւնութիս, բնաւնութիս... Ի՞նչ գիծ  
 մօդին իս, տօ:

Քթախոտը կրկին տուփն է ածում:

## ՊԵՊՕ

Արիվս գիղենայ, ԳԻՔՕ, էլ սաղ չիս պլծնի, թէ  
 դիվ մէտի էս սհաթիս չիս յիդ ասի:

Տօ, ախար, վուր դամբար չիս տալի՞ :  
զՈՒՃԱՆ

Գուն մւկը շշկեցրիր, քա՞ :  
ՊԵՂՈ

Պէ, չնւստ:

Հա՞ , էն էի ասում... ի՞նչ էի ասում. մտէս ննդաւ...  
ՊԵՂՈ, կիսածայն, առանձին:

Այ, դահրումար:

Հա՞ , վուր առուտեհան էն հանգի բան իմացայ:  
ՊԵՂՈ

Ը՞ն, քու մարթ ասողին ի՞նչ ասիմ. տօ, էտ խօմ  
ասիր, իժում:

Այ, իժում... Գնացի գէմուղէմը ձիր փեսի մօդ,  
տեսայ տանը չէր. էնդանց գնացի դուքանը, տեսնիմ՝  
էն ալդի-դաշտի նաթէլը հիդը քշփշում է: էն սհա-  
թին ճկըտկիս կծեցի. (ձկոյթը բերանն է դնում:) ասի  
բանը բանի նման է: Մ' քիչ մնացի. էն սատանի  
կնիկը վուր քաշգեցաւ, մօդ գնամ մէ լաւ ծանդը ու  
բարակ հիդը խօսիմ էս միը պարնի հիդ:

ՊԵՂՈ, անհամբերութեամբ:

Իժում ի՞նչ ասաւ:

Այ, էս սահաթիս, կարքով գալիս իմ, էլի՞ :

ՊԵՂՈ, բունցքը բարձրացնելով:

Ը՞ն, Գիքօ, էկաւ, Աստուծ գիդենայ:

6  
5  
3

Գիքօ, յետ բաշուելով:

Տօ, մի խառնի, է:

ԶՈՒՃԱՆ, բոլոր խօսակցութեան ժամանակ անհամբերու-  
թեամբ ծնկները տրորում է:

Վա, բա դադէմարթա, Պէպօ:

Ձեր անգաճը բաղմնչու արաւ, ամա վիրչը կո-  
տրվեցաւ ու իմացած դուրթ գուս էկաւ: Կինաղամ  
լիզուս փուրը ննդաւ, էսօրվան անմահ պատարաքը  
գիդենայ:

Վոյ, գեղինը պատոէ ու նըսն գէվէր ասնէ, վուչ:  
ՊԵՂՈ, բարկանալով:

Վա, գժվիլ իս, թէ հանաք իս անում:  
ՊԻՔՈ

Իմ հոքին գիդենայ:

Տօ, իժում նա ի՞նչ ասաւ:

Նա էլ էն ասաւ, վուր ես ձիր Կէկէլին խիստ իմ  
ուղում, կ'օսէ, ամա բանը վուր գլուխ չէ գալի, կ'օսէ,  
ես ի՞նչ անիմ, կ'օսէ:

ԶՈՒՃԱՆ, երկու ձեռքով ծնկներին խփելով: —  
Մաթիկ էն անհամուսին, է:

ՊԵՂՈ, բարկանալով:

Վոյնց թէ գլուխ չէ գալի:

Էնէնց, էլի՞ . ասում է՝ ի՞նչի՞ ի՞նչ խոստացիլ իք,  
չիք տալի, կ'օսէ: (Յողւց հանելով:) է՞ն, Աստուծ:



**ՊԵՊՕ**  
Վունց թէ չինք տալի... Տօ, գմնա ինքը չի գիդի  
բանի գօրութինը:

**ԳԻՔՕ**

'Ես ինչըու վուր մէ օրը մնամ, կ'օսէ:  
ՃՈՒՃԱՆ

Ուր է մնում, ով է ասում նրան վուր մնայ:  
Թնդ ուզէ, խոստացածն էնդի շէ: 'Եփոր դուս գու  
քայ, իրն է ու իրը... Ա'ստուձ անէ քու դիւտնն,  
Ա'րութին:

**ԳԻՔՕ**

Նա էլ էտ է ասում, Ճուշան, Է. 'Ես ասում է,  
ախչիկ իմ ուզի, կ'օսէ, դաւի-դառաբա խօմ չիմ առ-  
նում, կ'օսէ:

ԳԼՈՒԽԸ շարժում է:

**ՊԵՊՕ**

Տօ, էտոնք դիփ մէտի խօ հարուր ջէր խօսիլ  
ինք. հիմի նուր չար, նուր բարի:

**ԳԻՔՕ**

Բանն էլ էն է, Պէպօ ջան, վուր նա ասում է՝  
Էտ բանն, ասում է, տարիք կու քաշէ, կ'օսէ, ու 'ես  
էլ չիմ կանա համփիրի, կ'օսէ. կնիկ ուղիլը խիստ  
իմ ուղում սրտով, կ'օսէ: (Աղաղակում է՛:) Միզայ Քիզ,  
Աստուձ, միզայ... Էս իմ միխկի պատիժն է դիփ...  
ՃՈՒՃԱՆ

Մէ խօսկով ասա, Գիքօ, վուր Կէկէլին թողնում  
է, էլի...

**ՊԵՊՕ**

Ու բանը մօշլա է ըլում:

**ԳԻՔՕ**

Թէ էս սահաթիս փուղը չճարեցինք, մօշլա արած  
է ու մօշլա արած:

**ՊԵՊՕ**

ԻՍՏԱԿ:

**ԳԻՔՕ**

ԻՍՏԱԿ, ԻՍՏԱԿ:

ՊԵՊՕ, չարացած վեր է թոշում տեղից եւ մի քանի քայլ  
առաջ նետուելով՝ ծեռքը ծեռքին խփում:

Վայ, քու տղիս տղայ... (Գիմում է Գիքօին՝ ծեռ-  
քերը առաջ տանելով:) Տօ, իժում ինչ ասիր:

ԳԻՔՕ, յիտ քաշուելով, վեր է կենում տեղից:

Իուն ինձ ասա, էլ ինչ պիտէի ասիր:

ՊԵՊՕ, առաջ գնալով:

Տօ, ախար, չհասկացրիր իրան, վուր չինք խա-  
փում:

ԳԻՔՕ, յիտ քաշուելով:

Վայ, բաս չհասկացրի:

ՊԵՊՕ, առաջ գնալով:

ԻԺՈՒՄ:

ԳԻՔՕ, յիտ քաշուելով:

Իժում էլի էն ասաւ, էլի, վայ:

ՊԵՊՕ, առաջ գնալով:

Ու դուն էլ զարու արիր:

ԳԻՔՕ, յիտ քաշուելով:

Վայ:

ՊԵՊՕ, առաջ գնալով:

2է, մէ ինչ խիլք բանեցրիր, ինչ...

ԳԻՔՅՈ, հասնելով թեմի աջ կողմը և ճանապարհ չգտնելով:  
Վա, հէք օխնած, 'ես ի՞նչ անիմ, թէ կի էն  
մարթն էնէնց է ասում:

## ՊԵՊՈ

Տօ, դուն ի՞նչ ասիր, դուն:  
ՃՈՒՃԱՆ

Պէպան, գժվիլ իս, թէ ի՞նչ խաբար է: Ախար,  
Էտ հանգի խօսիլ կուլի:

## ԳԻՔՅՈ

Տօ, 'ես էլ էն ասի, ինչոր զիդիս, էլի: Ասի՝ եա  
մնա ինչըու աղա Արութինի փուղը դուս գայ, էն  
չախն ուղէ, ասի, եա թէ չէ, ասի, հիմիսկ էւէտ  
ուղէ ու Արութինիմէն փուղը զնւն առ, ասի:

## ՊԵՊՈ

ԻԺՈՒՄ:

## ԳԻՔՅՈ

ԻԺՈՒՄ էն, վուր նա կտրական ասաւ, թէ 'ես  
դաւի-դառարի գլուխ չունիմ, կ'օսէ: Դ'ուղիք փուղը  
էսօր բերէք, 'ես էս զիշիր էւէտ փսակվիմ, կ'օսէ:  
'ես իմ խօսկէմէն յիդ չիմ կանգնում, կ'օսէ:

## ՊԵՊՈ

Տօ, բաս էտ էիր քօվլանում, թէ խելօք մարթ  
իմ, կ'օսէ. Էտ էիր ասում, թէ Խիկար իմաստունը  
գլխէմէն ինչըու փուղը զիփ կարթացիլ իմ, կ'օսէ:  
Էտ է էլի քու չնուքը:

## ԳԻՔՅՈ

Ախար... (Հազում է:) հուր, հուր... 'ես ի՞նչ միդ  
ունիմ... (Հաղը սաստկանում է:) չուր, հուր, հուր...

ՊԵՊՈ  
Այ, զահըումար ու չոռ ու ցաւ:  
ՃՈՒՃԱՆ

Պէպօ, Պէպօ, ի՞նչ էլաւ քիդ:  
ՊԵՊՅՈ, հնոանալով Գիքօից:

2Է, 'ես գնամ մէ էս սհաթիս հիդը խօսիմ՝ տես-  
նիմ թէ վունց է թողնում:  
ՃՈՒՃԱՆ, վեր կենալով տեղից:

2Է, դուն կաց ջեր, Պէպօ, 'ես գնամ մէ էն կապ-  
կտրած նախթէլին աեսնիմ: (Շտապով դաթիրան հանում  
է նահալու տակից եւ գնալով:) Գիքօ, մէ հիդս արի,  
թէ քու Աստուծ կու սիրիս, էս քուշն անց կացըու:  
Գուրս է գնում դիմացի դոնից:

ԳԻՔՅՈ, զնալով եւ հազից խեղդուելով:  
Քի մօդ բան բանիլը դաւի-դառարա է զրուստ:

Գուրս է գնում Շուշանի ետեւից:  
ՊԵՊՅՈ, Գիքօի ետեւից:

Քու մարթ ասողին էլ ի՞նչ ասիմ:

## ՏԵՍԻԼ Ե

ՊԵՊՕ, մնակ. մի փոքր լոռւթիւնից յիսոյ:

Ուրիշ ախչիկ գ'ուղիս. բաս Պէպօն մեռաւ, էլի...  
Տեսնիմ վունց իս ուղում... (Կորից լոռւթիւն:) 2Է,  
Պէպօ, դուն հալալ տղայ իս, հալալութինը սիրում  
իս, քու բանումն էլ հալալ կաց: Խնչնվ է սուտ քի  
մօդ քու փեսէն. խնստացիլ իս, պիտիս կատարի քու  
խօսկը... Թէ գլխիտ գլակ ունիս, պիտիս տա. թէ-

գուղ կաշիտ պլոկվի, թէգուղ հոքիտ զուս դայ,  
պիտիս տա... Ամա վնւրդի ճարիմ էն զահրումար  
վուղը... Ո՞վ կու տայ ինձ էնդադա... (Նայում է պա-  
տերին): Ո՞վ ինչ կու տայ էսաուրը. դիփ մէտի վուր  
դրաւ դնիմ, դիփ մէտի վուր ծալիմ՝ տուն, տիդ,  
շուրը... Իչ կու տան... կիսի կէսն էլ չի զուս զա...  
Ե՛ս էր վիրչն, Էլի. Էս էր ուզում, Էլի, Արութին.  
Էսաու համա էր չարչըրում, Էլի, ինչըու հիմի...  
Աշխըքումը պիտի խայտառակ ըլիմ, Էլի... Էլ իմ  
ննդրտերանց էրեսին վննց մտիկ անիմ. ինչ կ'օսին:  
(Գլխարկը յատակին է խփում): Փու քու նամուսին...

## ՏԵՍԻԼ Զ

ՆԱ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ, շփոթուած ներս մտնելով ձախ դռնից:  
Էս ինչ խաբար է, Պէպօ:

Պէպօ, զիսարկը վիրցնելով եւ թափ տալով:  
Վունչիշ, ինչ խաբար պիտի ըլի:  
ԿԵԿԵԼ

Ի՞նչ իս ինձմէն թախսկայնում... (Լալով:) 'Ես իմա-  
ցայ, դիփ իմացայ, Պէպօ...'

Պէպօ, զիսարկը ծածկելով:

Ի՞նչ իմացար, ԿԵԿԵԼ, ինչ իս լաց ըլում:  
ԿԵԿԵԼ, Թաշկինակով սրբում է աչքերը եւ կոկիծով:  
Իմացայ, Պէպօ ջան, իմացայ... Ես սհաթիս դէ-  
դէն ու Գիքօն վուր գնացին... նըանց խօսիլն իմա-  
ցայ... ինձ թողնում ին...

## ՊԵՊՕ

Մնլափի, մնլափի, ԿԵԿԵԼ, Ջեր էլի Աստուձ օղոր-  
մած է...

## ԿԵԿԵԼ

Աստուձ շատ վուխտ է՝ խռով է կացի իմ զլխին,  
էլ ինչ օղորմած է... Խալսումն ինձ պաշ անէ, դի-  
փունքը չնահաւուրին, իժում ինձ թողնէ ու գնայ մո-  
րիչին ուղէ... Էսաու համա ստիղծից ինձ Աստուձ...  
Միթամ անմիղ փալաս էի, քուչէն գցեցին... միթամ  
քուչի ցիս իմ, թոն վուտի տակը կոխչըրափին... Վայ  
իմ նամուսին...

Լաց է լինում եւ աչքերը սրբում:

## ՊԵՊՕ

Ախար, Ջեր անմիղ իս լաց ըլում, ԿԵԿԵԼ, Է:  
ԿԵԿԵԼ, շարունակելով լացը:

Ի՞նչի գեղինը չիմ մտնում էս սհաթիս: Էլ իմ  
տօլ ախչկերանց էրեսին վննց պիտի մատիկ անիմ.  
Պիփունանց խօսելու պիտի դառնամ, Պիփունքը մաս-  
խարա պիտի գցին ինձ, Պիփունքը պիտի վրէս ծի-  
ծաղին...

Աչքերը սրբելով՝ լաց է լինում:

Պէպօ, փաթաթուելով:

ԿԵԿԵԼ ջան, ԿԵԿԵԼ:

## ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼի շնքին քար կապէ, Պէպօ ջան, ու տար  
Քուռը շպոտէ... Էլ ՚ես վննց պիտի ապրիմ աշ-  
խարքումը:

## ՊԵՊՕ

Մէ սիրտդ յիդ բի, ԿԵԿԵԼ, Է... Փուղի բան չէ.

վուրդիոր կու'լի, կու ճարինք... Թէ Արութինը չի  
տա, դիմ մէտի կու ծախծիմ, կ'էհամ ախկըտու-  
թին կ'օնիմ, զլուխս զրաւ կու դնիմ ու քիզ էտէնց  
շիմ թողնի:

## ԿԵԿԵԼ

ԶԵ, չՖ, Պէպօ ջան. 'ես իմացայ, վուր էտ փուղը  
էսօր էւէտ է հարկաւուր ու մէ օրումը միզ ով ինչ  
կու տայ, ով ինչ կու սիլցնէ: Գլուխտ առանց էն էլ  
միզ համա գրաւ իս դրի ու գրաւ: Վուշ էր էլի էն  
փուղի անումը, էս բէդնամութինն էլ չէր գա զլու-  
խը... (Լաց է լինում, կուլիսից լսվում է ԿԱԿՈՒԼՈՒ  
ձայնը՝ Պէպօ: ) Գեղդինը պատէ ու ինձ դէվէր տանէ:

Աչքերը սրբելով՝ դուրս է վազում ծախ դռնից:

Պէպօ, ծնկանը խփելով:

Վայ քու Պէպօին:

Վշտացած նստում է տախտի վրայ:

ՏԵՍԻԼ Է

ՊԵՊՈ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ, զիսարկը ծածկած, ներս գալով դիմացի դռնից,  
մէկ ծեռքին թաշկինակում կտպած պաշարեղէն, իսկ  
միւս ծեռքին կէս-թունգանոց:

Մէ զինի իմ բերի, Պէպօ, մէ զինի, վուր է,  
դաւի շունիմ:

Պէպօ, դառնացած:

Քէփ կ'օնինք, Էլի:

## ԿԱԿՈՒԼԻ

Վայ, ինչ է պատահի:

ՊէՊՕ

## ՎՈՒՆՉԻՀ:

## ԿԱԿՈՒԼԻ

Վայ, չիմ տեսնում. էկած էլ կու ճանչնամ քիզ,  
ՊէՊՕ

ԷՇ, մախլաս, կու խօսինք, Էլի, իժում:  
ԿԱԿՈՒԼԻ

Հը՛, Էլի տեսիլ իս նրանցը՝ Հիւռու կացի, թէ  
ախպէր իս:

ՊէՊՕ

Թողնում ին, վուր հիւռու կինամ:  
ԿԱԿՈՒԼԻ

Արի, մէ-մէ ստաքան գցինք ջեր հալա, թէ ան-  
դիկօրը չին կորչի ու կու տեսնիս..., Վաղ ու վաղ  
ինձ մօդ էլ խիստ շուստ-շուստ էին գալի, ամա  
(Խփում է կէս-թունգանոցին: ) դիզը գթայ... Հանց պու-  
ղիրը տիսնում իմ թէ չէ շաբաշ... (Վրայ է քաշում  
կէս-թունգանոցը, յիտոյ երգում է բայեաթի: )

«Ազիզմ, նաշար, աղլամա,

Գիւն դըր, գէշար, աղլամա.

Բու ղափի թարս բաղլիան»

ՊէՊՕ, զլուխը շարժելով, կիսաձայն եւ թիւ:

«Բիր գիւն աշար, աղլամա: »

ԿԱԿՈՒԼԻ, շարունակելով երգը, վերջացնում է բայեաթին:

«Բիր գիւն աշար, աղլամա: » \*

\*) Թուրքերկն հ. — Սիրելիս, մնար, մի լար,

Աբա, (Կէս-Թունգանոցը առաջարկելով Պէպօին:) տիս թէ  
թէրի պէս չկտրէ:

ՊԵՊՈ

ԷՇ:

ԿԱԿՈՒԼԻ

Զլուկ ւմ. տեսնում իմ խիստ մինձիքն ին էկի, է:  
չը՝, վհնչ ին... (Թաշկինակը եւ վինու ամանը դնում է  
սեղանի վրայ եւ ծեռքերով պոզեր ներկայացնում;) էս էս-  
դադա պնդվիրը... հը՝... ջեր արթուրմէքը սարքիլ  
լին թէ չէ: Ախար, կու ճանչնամ ինչ պտուղ էլ իս, է:  
ՊԵՊՈ

Ճանաքի վուխտը չէ, Կակուլի, թէ Աստուծ կու  
սիրիս. բօղադներուս դուս է կտրվում:

Վեր է կենում տեղիցը:

ԿԱԿՈՒԼԻ

Վահ, ինչ խարար է:

ՊԵՊՈ

Էլ ինչ խարար պիտի ըլի, բէդնամ ինք ըլում.  
Քվիրս թողնում ին:

ԿԱԿՈՒԼԻ

Փեսէն:

ՊԵՊՈ

Բաս ուրիշ մվ կուլի:

ԿԱԿՈՒԼԻ

ԷՇ:

Օր է, կ'անցնի, մի լար.

Այս գուը թարս կողպողը

Մէկ օր բաց կ'անէ, մի լար:

ՊԵՊՈ

Աստուծ գիդինայ:

ԿԱԿՈՒԼԻ

Վայ, 'ես նրա... Արի զնանք ծեծինք, Պէպօ. մէ  
ալիկուլի ծեփիմ էս սհաթիս, վուր սապօկի կրնգի  
վրայ երիք չէր վրայ ու վրայ պտուտ զայ... Աբա,  
'ես քիզ ասում էի, Պէպօ, է, վուր կուպէծը միր  
րան չէ:

ՊԵՊՈ

Բանը բանէմէն անց է կացի, Կակուլի, էլ էտու-  
րը ինչ ֆայլիպա: Բանն էն է, վուր թէ ինչ խոստա-  
ցիլ ինք, էս սհաթիս շտվինք, էս գիշիր ուրիշի  
վրայ է նշնվում:

ԿԱԿՈՒԼԻ

Դէ, քնլթահ արէք ու պրծէք, էլի՛... (Բամարը յիտ  
է անում:) Թէ իմքին պակսի, էս էլ վլէն աւելցնւ,  
մէ հինգ թուման կու տան... (Զախ ծեռքով բամարը  
բարձրացնում է:) Զարթնի էս, Պէպօ ջան, (Աջ բռունց-  
քը ցոյց տալով:) ու մէկ էլ՝ էս, էլ ուրիշ վաւնչիչ  
շկայ իմ մէշն, ախպէք:

ՊԵՊՈ

Էտընցութենով բան չի դառնա, Կակուլի ջան.  
Դուն լաւ գիդիս, վուր հարուր թուման փուղ ինք  
խոստացի, ու էն անիծած Ալութինը էսօր էքուցն  
է զցում:

ԿԱԿՈՒԼԻ

Օ՛հ, նա ապրմնք. 'ես քիզ ասում իմ, ինչըու  
նրա փուրի վրայ էլ մէ դհօլ շածինք, վունչիչ չի  
դուս գա:

**ՊԵՊՕ**  
Ե՞ն, Կակուլի, զուն էլ հէնց գիդիս ամեն բան  
մենակ մուշտէ կովով է շինած:

ԿԱԿՈՒԼԻ

Բաս ինչի՞ չէ տալի, թէ զուրթ պարտ է:  
Քամարը կապում է:

**ՊԵՊՕ**

Վունց թէ զուրթ պարտ է. բաս սուտ իմ խօ-  
սում քի մօդի. ամա էն անիծած բարաթը վուր չէ  
գթնըվում, ինչ անիմ:

ԿԱԿՈՒԼԻ

Ի՞նչ բարաթ, էտ չիմ իմացի:  
**ՊԵՊՕ**

Վա, բաս չիմ ասի քիդ:

ԿԱԿՈՒԼԻ

2Է:

**ՊԵՊՕ**

Վուր բարաթ ունէնք նրանն ու էն բարաթը  
կորաւ:

ԿԱԿՈՒԼԻ

2Է, Պէպօ, չէ. էն կի իմացիլ իմ, վուր էն բայ-  
ղուշը փուղ է պարանցի քու հօրը, ամա բարաթը  
առչի իմանալս է... Խժում էտ վունց կորաւ, տօ:

**ՊԵՊՕ**

Աստուձ վուշ գիդէ միր գլուխը:

ԿԱԿՈՒԼԻ

Թէ ախալէր իս:

**ՊԵՊՕ**

Ասիմ, չասիմ, Կակուլի ջան, էլ ինչ կու օտկըվի:

ԿԱԿՈՒԼԻ

Թէ լոթի իս, տօ:

**ՊԵՊՕ**

Այ, վունց էր, ախալէր... իմ հէրը փուղ է ունե-  
նում, տալիս է նրան շահով. լաւ շահվեցանք. բա-  
րաթն առնում է ու պահում է... Քանի սաղ էր իմ  
հէրը, թէգուզ քսան ջէր իմ տեսի էն անիծած բա-  
րաթը. հէնց մեռնելու մէ շափաթ առաշ էլ ձեռին  
ունէր խիզը... Մահի էդնէն զութին բաց անինք՝  
էլ չկայ, չկայ, չկայ ու չկայ:

ԿԱԿՈՒԼԻ

Եէշ... այ, թուրմէ ինչ բան է էլի... Տօ, Պէպօ,  
ինքն Արութինը շըլի զողցի էն բարաթը:

**ՊԵՊՕ**

Ե՞ն, ինչ իս սարսաղ-սարսաղ զուս տալի, տօ.  
միր զութումը նա ինչ դաւի ունէր:

ԿԱԿՈՒԼԻ

Բաս մվ կու գողնէր, Պէպօ:

**ՊԵՊՕ**

Վուր գիդենամ, իր միդ համա էլ լաւ կուլի:

ԿԱԿՈՒԼԻ

Կուլի քու հէրը հիդը տարաւ, տօ:

**ՊԵՊՕ**

Մինք էլ էտէնց ինք ասում. կուլի շուր հարցնե-  
լիս հիդը դնաց:

ԿԱԿՈՒԼԻ

Մակի, է... Արա էն կինքումը թամաշա արա,  
Պէպօ, թէ ինչ կ'օնին աղա Արութինին: Զուրս-շուրս  
սատանէն վուր բարաթն առչիւր կու ձքին, վայ, վայ,

վայ, վայ, դէղի ծծիր, դնւն բարեխօս... նէտայի մէ  
թամաշա անիլ տան, Պէպօ ջան, թէգուղ հէնց էտու  
խաթիր կ'էհամ զժուխքը: (Նիծաղում են:) Տօ, հա-  
նաքը դէնը, էլի լաւ պատահցէք, կուլի գթնըվի:  
ՊէՊ

Տակն ու վրայ ինք արի տուն ու տիղը, ինչո  
ասում:

## ԿԱԿՈՒԼԻ

Իժում էն գոմշի գլուխն էլ զիղէ, վուր բարաթը  
կորիլ է:

## ՊէՊ

Դիղէ, վուր չէ տալի, է:

## ԿԱԿՈՒԼԻ

Տօ, խօ գիղէ վուր պարտ է:  
ՊէՊ

Բաս չի գիղէ:

## ԿԱԿՈՒԼԻ

Դէ, տայ, է:

## ՊէՊ

Անկճիտ բամբակը հանէ, տօ. էն մարթն ասում  
է թէ՝ միտս չէ, կ'օսէ, դաւթըրներումն չիմ գրթ-  
նում, կ'օսէ, բարաթը բի, ասում է, ու փնւղը տար,  
կ'օսէ:

## ԿԱԿՈՒԼԻ

Աստուձ գիղենայ, Պէպօ, զարթնի գնքսիլը ուրիշ  
ճար չկայ: Դուն ինձ թնդ. էն Օրթաճալէմէն վուր  
յիդ է զալի, ձեռնիրը էհնց զարսած, (Զեռքերը  
ետեւն է դարսում եւ մի քանի քայլ անցնում Արութինի

նման:) հէստիկ չինիմ, հէստիկ չինիմ, վուր սէփիլի  
բայաթի կանչիլ տամ 'ես նրան:  
ՊէՊ

Երանիշ քիզ, Կակուլի, վուր քուր չունիս մար-  
թու տալու:

## ԿԱԿՈՒԼԻ

Էտու համա էլ դարդ չէի անի. Ճիզ պէս կու-  
ոլէծներու էղնէն չէի ննդնի: Վիրշի կինտօխն կու  
փնխիմ նրանց հիշդ: Մրկ վուր ստիղծիլ է Աստուձ,  
թոշունիքի հանդն է ստիղծի՝ օր դադինք, օր ու-  
տինք, էլ մեռնելիս անդէրձի գլուխ ո՞վ ունէ, տօ՞:  
ՊէՊ

Լաւ է, լաւ, խիլքիտ մի զոռ տա, հերիք է.  
Գնա էն մուրծէքը մորթոտէ, նստինք մէ-մէ թիքա  
չոռլամիշ ըլինք, իժում տեսնինք՝ Աստուձ ինչ է  
տալի:

## ԿԱԿՈՒԼԻ

Հա, էտ իմ խիլքի բան է. մէ սուփրէն վուրդի  
է, էստունք յիդ դարսինք:

Վերցնում է կապոց:

## ՊէՊ

Ե՛ս սահաթիս... (Մութաքաները մի կողմն է զնում  
եւ զնում Թարեքից վայր է բերում հին ձեւի կապոյտ նախ-  
շուն սփոռց, վայտէ դեղին դդալնիր եւ մի քանի ափսէ:)  
Ա՛յ, բի:

Սփոռցը բաց է անում տախտի վրայ եւ իրեղէնները  
վրան դարսում:

**ԿԱԿՈՒՆԻՒՅԻՆ**, քրուրմ է տախտի վրայ, Թեւով զիսարկը յետ  
է քաշում ճակատից եւ կապոցը բաց անում. յետոյ  
Թաշկինակից յետ դարսելով սփռոցի վրայ մի կտոր  
գոշ, կաւանչի, լոշ եւ մօթալ: [Գոշը եւ մօթալը կա-  
ղամբի Թարբ տերեւներում:]

Մաիկ էս ալաբարութին, Ե. էս էլ կանանչի, էս  
էլ լօշ, էս էլ մօթալ:

Պատարկ Թաշկինակը վերցնում է:  
ՊԵՊՈ, մօմալը տնտելով եւ տխուր:  
Հաւն է էսկում:

ԿԱԿՈՒԼԻ

իժում էս կանանչուն ի՞նչս առում... (Վեր առնելով կանանջին եւ թափ տալով:) Մտիկ, Է. կ'օսիս կանանչ մայմուր րիի:

ՊԵՊՈ, միշտ տիսուն:

Հօշաղ իս, Կալուլի. մէ ստաքնիր էլ բերիմ:  
ԿԱԿՈՒԼԻ, տերիս մեր թռչուն:

Վահագում, առաջ զօր տունով։  
Վահ, մի խիլ չէ։ Էս հանգի գինին ստաքնով կու  
խմբն։ Հոքուտ ինչ իս ասում... (Գլխարկն ուղեկեռով  
զնում է կէս-թունգանոցը վերցնում) Տօ, էն քիշանը  
բի, վաւը խմելիս էրեսարքը մէշն էրեայ քրիստոնի  
պէս, է։

Կէս-Թունգանոցը տանում զնում է սփռոցի լրայ:

Դէ ԿՇ, սոյն միջոցին, զնալով:  
Գիղիմ, գիղիմ... (Թարեթից վերցնում է եւ բերում  
մէկ հատ քրեական, մի քանի գինու բաժակ եւ արծաթա-  
ղարք փայտէ կուլա): Հը՞՝, էս էլ քու քիղանը. էս էլ  
վրէն աւել, թէ պ'ունիս:

Բոլորը գարսում է սփռոցի վրայ եւ կարգի բերում:

ԿԱԿՈՒԼԻ, ՎԵՐԳՆԵԼՈՎ ԿՈւլան:

፭፻፭፱

Ա'իս, Կակուլի ջան, պլիտի դարդ չունենամ, վուր  
լաւ բի:

ԿԱԿՈՒԼԻ

Տօ, մարդ էս հանգի հոքէվուլթի ունենայ, էլ դարդը ինչ վուտնիլս է:

ուլան վայր է դնում սփռոցի վրայ։  
**ՊԵՊԾ**

Ղաւէ, ղաւ... Դէ, գին, էլ մի ուշացնի. էստունք  
'սս կարքի կու բերիմ:

ԿԱԿՈՒԼԻ

Մէ ձնւգն էփիմ, մէ ձնւգն էփիմ, Պէպօ ջան,  
(Գնալով:) քէփդ բաց լլի:

յտնում են դիմացի դռնից՝ Շուշանը դա  
Գիրօն գլխարկով ու ձեռնափայտով:

## ՏԵՍԻԼԸ

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՒԹ

## ԿԱԿՈՒԼԻ

Բարնկ, գէղի ջան:

Պէտօն անշարժ եւ նետաքրքրութեամբ նայում է  
Շուշանին:

ՋՈՒՂԱՆ, կակուլուն:

Ապրիս, վուրթի:

## ԿԱԿՈՒԼԻ

Օ՛, աղա Գիքօ, բարով ՚ես ու գուն: (Առաջ դալով  
եւ Պէտօն՝ ցածր:) Սրա վրա լաւ հօնաղ շգթամբ, տօ:

## ՊէՊօ

ՄՌԱԼԱՓ... (Շուշանին:) Ի՞նչ իմացաք:

Կակուլին Գիքօի ետելից նրա նման իբր թէ քթա-  
խոտ է քաշում, բայց խկոյն դադարում է եւ  
ուշադրութեամբ լսում խօսդներին:

## ՋՈՒՂԱՆ

Ել ի՞նչ իմացայ. գեղինը պատռէ ու ի՞նձ գէվէր  
տանէ: Թէ էսօր չճարեցինք, Պէպան ջան, էս գիշիր  
դիփ մէտի մօշա է ըլում... Այ, ՚երգնքէն առնիս  
մագիէրն, Մրութին: (Դաթիբան վեր առնելով:) Նա խօ  
էսօր չի տա ու, ուրիշ տիղ ով ի՞նչ կու աւտայ միզ:  
Ելի հոքուն վրայ հասայ էն կապ-կարած նաթէլին,  
թէ չէ է վիրչի խօսկն էր տանում նուր ախչկայ  
ախրուշմէն էն միր սիւէրես վեսի մօդ: Սատանէն

## ՊէՊօ

Ցօ, վեսիմէն ի՞նչ իս ուզում. ինչ խոսացիլ ի՞նք  
պիտի տանք թէ չէ: Նա էլ մարթ է, գլխին զգակ  
ունէ ծածկած, միզմէն էլ վուրդի խափիվ. աշխարքն  
ալան թալան խօ չէ... էնդազա ասի, վուր մնալափ,  
գէղի, ջեր վուղը գուս գայ, իժում էլնք նշնի. ամա  
ձիր օխտէմէն ով գու քայ... Ի՞նչ հաջաթ ու, ուր  
կու կորչի ու, Արութինը միր միխկն ի՞նչ կ'օնէ ու,  
հաջա խօմ չի ուտի ու. դէ, գնա առ, տեսնիմ վունց  
իս առնում:

Գիքօ, նստելով սեղանի մօտ եւ երկար յոզւոց հանելով:

Ա'ս, իմ գօղալ բարաթ... եարաք վունց կորաբ:  
Խփում է ծնկանը:

## ՊէՊօ

Զէնդ, Գիքօ, թէ չէ, մասարս գիղենայ, ինչ ջիպ-  
րըն ունիմ, դիփ քիզ վրայ կու հանիմ էս սահա-  
թիս: Գուն վուր չէիր խառնըվի էս բանումը, էս  
խայտառակութինն էլ չէր զա միր գլուխը. Ճհանդամը  
վուղի գլուխը, նրա մօգոնողին էլ ի՞նչ ասիմ:

## Գիքօ

Ա'ս, Պէպօ, վուրթի, չիս գիղի թէ սիրտս ի՞նչ  
հանգն է վութոթի գալի... Ի՞նչ անիմ, ի՞նչ ասիմ...  
Լաւ կ'օնիս՝ սպանիս ի՞նձ, պրծնիմ, գնամ դնջանամ:

## ՊէՊօ

Արա էտ խօսկ է, վուր գուն իս ասում, Գիքօ...  
Տեսնում իս՝ սադ օճոռքը գլխիս քանդվում է. Էլ ի՞նչ  
իս, էս ջգրած վուխտը, ցաւիս վրայ նուր ցաւ  
աւելցնում: Մէ իմ դարդն էլ իմացի, հէր օխնած, է:

ԳԻՔՅՈ, խորը յոգւոց հանելով եւ ցածր:  
Ա'խ, ա'խ, ա'խ...

Զեռքով աչքերը սրբում է:  
ԿԱԿՈՒԼԻ

Մ'ՆԼԱՓԻ, մէ բան ասիմ 'ես, Պէպօ. օմքին վկայ  
չկայ, վուր վրահասու ըլի էտ պարակին:  
ՊԵՊՈ

ՄԻԹԱՄ դուն էլ խիթիս զօռ տիփիր. էտով վուր  
բան էր դասի, խօ էս խաթաբալէն էլ չէր ըլի:  
ԳԻՔՅՈ

Ա'յ, վկայ չիմ, բաս ինչ զահրումար իմ... ամա  
վուր չէ ըլում:

ԿԱԿՈՒԼԻ

ՊԵՊՈ, կակուլուն:  
Էս բանումը վկայ-մկայ չի ըլի, կ'օսէ, չիս իմա-  
նում:

ԿԱԿՈՒԼԻ, առանձին, զորկիր շարժելով,  
Զէ, ես նրան պիտի հարիմ:  
ՃՈՒՃԱՆ

Ախար, էն օրը էն սիվարտովն ինչ ջուղար էրիտ  
կտրական:

ՊԵՊՈ

ՄԻԹԱՄ չեր չիս իմացի... Սսաւ՝ 'ես միտս շու-  
նիմ, կ'օսէ, դաւթըըներումս չէ էրեռում, կ'օսէ, թէ բա-  
ռաթ իմ տվի ձիղ, բերէք ու փնտղը տարէք, կ'օսէ:  
ՃՈՒՃԱՆ

Բաս միթամ հաշա է ուզում ուտի՛: Էտ վո՞նց  
կ'օնէ, Պէպան. աբա քիմէն չիմ արմընում: Էնէնց

Հարուստ մարթը լայիդ պիտի անի էտ հանգի բան:  
Նրա համա հալուր թուժանն ինչ — մէ զբօշ, վուր  
ուղենայ բախշելով էլ կու բախչէ:

ՊԵՊՈ

Վո՞նց չէ, դէմ է բերում:  
ՃՈՒՃԱՆ

Ա'յ, կու տեսնիս թէ չէ... (Լացի ձայնով:) Կ'ԷՀԱՄ,  
առշիւը կու չոքիմ, լաց կուլիմ, իր վուրթ կերանց  
արիւ սաղաղա գ'ուզիմ, օրթում կ'ուտիմ, վուր թէ  
միր մէշը բարաթ լուս ննդնի, թիբա-թիքա անէ  
միզ, բաթընամա կու տամ, տասը վկի ձեռք կու  
քաշիլ տամ. մէ օր հոքի ունէ տալու, իր հոքէմէն  
ձեռը վճնց կու վիկալնէ:

ՊԵՊՈ

Մ'ՆԼԱՓԻ, մ'ՆԼԱՓԻ, դէղի, դ'նւն մուլափ, 'ես կ'ԷՀԱՄ,  
'ես. էս սհաթիս յիդ կու քամ, ինչըու դուք նստեցէք:  
ՃՈՒՃԱՆ

Զեր մէ թիքա հաց կի. մէ սահաթ առաջ ըլի,  
յիդ ըլի, դիփ մէկ է:  
ՊԵՊՈ

2է, ինչըու չտեսնիմ, բօղազումս հաց չի դէվեր  
գնա. շուրիս վո՞ւրթէնն է:  
ՃՈՒՃԱՆ

Երէգ զանդուկը դրի:  
ԿԱԿՈՒԼԻ

'ես էլ գամ, Պէպօ:  
ՊԵՊՈ

2է, դուն գնա բանդ տիս. էս սահաթին գալիս իմ:  
Դուրս է զնում աջ զոնից:

**ԿԱԿՈՒԼԻ**  
 Դուն գիդիս... (ափերով իր կրծքին:) Ա'լի, Աբու-  
 թին, 'ես թէ քու օխտէմէն չէկայ ու կու տեսնիս...  
 Դուրս է զնում դիմացի դոնից:

**ՏԵՍԻԼ Թ****ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ**

Գիքօ, նստած, սեղանի մօտ, քթախոտ քաշելով:  
 Է՛հ, Աստած, օրհնվի Քու դադաստանը:  
 ՋՌԻՃԱՆ, նստում է տախտի վրայ եւ ճայնը երկարացնելով:  
 «Ա'լի, Աստած, վախ, Աստած, վուրին կու տամս  
 սէլով փէտ, վուրին շիս տամ ցախ, Ա'ստուծ:»

Գիքօ

Հա, հա, ձուշան:

**ՋՌԻՃԱՆ**

Է՛հ, օրհնվի նրա դարգահը. վուրին էնդադա դօվ-  
 լոթ է տալի, վուր իր դօվլաթը չէ կանացի մարսի,  
 ու վուրիմէն օրվան թիքէն խում է ու էն էլ դօվ-  
 լոթաւուրին է տալի... Փառք երան, իր կամքն է.  
 Հալքաթ միր ճակտին էս էր գրած:

Գիքօ, մօտենալով սփռոցին:

Էլի Աստուծ օղորմած է, ձուշան... (Վերցնելով  
 դօշը եւ զլուխը շարժելով;) Ի՞նչ ղիամաթ իմքին է:

Գօշը կրկին իր տեղն է զնում:

**ՋՌԻՃԱՆ, առանձին:**

Քու աճկն էլ... (Գիքօին:) Էլ ինչ օղորմած է,  
 չուրն էկիլ է ու միզ տարիլ է: Էն անաստուծը վուր

Էլի մէ բան մօգօնէ ու փուղը չտայ էսօր, եաբար  
 ինչ կու'լի միր չարէն. Նէք բք կու ննդնի խիղճ ախ-  
 չիկս: Թափաթ օրն օրվան վրայ հալվում է, էլ ինչը  
 կու ապրեցնէ նրան: (Լացով:) ԽԵՂԴ իմ Կէկէլ, նօրչի  
 արիվդ պիտի փշանայ, էլի, թագի մագիէր սիւ  
 գերեղմանը պիտի մտնիս...

Լաց է լինում:

Գիքօ, լացի ծայնով:

Օ՛հ, օհ, օհ...

Դուրս է զնում ծախ դռնից աչքերը սրբելով, իսկ  
 աջ դռնից մտնում է Պէպօն զարդի հագուս-  
 տով, զիսարկը ծածկած, արխալուխի մի քանի  
 կոնակը բաց, քամարը կապած եւ նրա վրա  
 գօտիկը կապելով:

**ՏԵՍԻԼ Ժ****ՇՈՒՇԱՆ, ՊԵՊՈ****ՋՌԻՃԱՆ**

Ցօ, ախար, ջեր մէ թիքա հաց կ'ուտէիր:  
 Պէպօ

Հաց չէ, դահրումար ուտիմ... Ի՞նչ կ'օնիմ հաց.  
 գանա հացի արժանի ի՞մ... (Գօտիկը կապելով;) Հացը  
 վուր ստիղծած է, գանա ի՞նձ համա է ստիղծած.  
 Հացը վուր ՚ես ուտիմ, աղա Աբութինը ի՞նչ ուտէ:  
 ՚ել հաց ուտէ, ՚ես էլ հաց ուտիմ... (Գառը ծի-  
 նա էլ հաց ուտէ, ՚ես էլ հաց ուտիմ...) Հըա, հըա, հըա...

## ՃՈՒՋԱՆ

Սիւցիլ էր իմ օրը, ահըտ: Աջերը սրբելով դուրս է գնում ձախ դռնից:

## ՏԵՍԻԼ ԺԱ

ՊԵՊՈ, մենակ, արխալուսի կոճակները մէր դցելով:

Գնա, Պէպօ, գեղին լզէ, խալիխ վուտներուն պաշարա, նրանց վուտի ցիխը լկէ... Ո՞վ իս դուն, ինչ դուն, ինչ մարթահէսարումն իս դուն, ինչ անում ունիս դուն... 'Եփոր գ'ուղին, վուտի տակը կու գցին քիզ, վրէտ կու ման գան, գեղնի հիդ կու հաւսըրին... ինչ հաջաթ, ջրանձվէլի վրայ ինչով իս աւել... Դուն իս մարթ չիս, մարթկերանց համա կերակուր է ստիդի քիզ Սստուծ... Գիշիր չարշըրվի, ցերեկ չարշըրվի, 'Երգնքի տակը լրսացրու, անձրըվի ու քամու հիդ կոին տու, ձմեռը ցրտէմչն կոնկոռնա, ամառը արեգակի շուքումն էրվի ու խնրվի... գնա էնէնց մէ թիքա հաց ճարէ ու էն թիքա հացով գէղիտ ու քվիրդ պահէ... Էս ինչ, ինչ մարթութին... Էսէնց շունն էլ է ճարում մէ թիքա, վուր տունը պահում է... Միթամ դուն էլ շուն իս... քանի աշխըրիս էրէսին ման իս գալի, դուն էլ շան պէս կերակրվի... Էս ինչ մարթութին է... (Դաղար:) Մարթ էիր ուզում դառնա. կ'էհէիր մարթիք կու թալնէիր, գուղութին կ'օնէիր, իմ նման խղճերուն կու գընէիր. Քսանուհինգ հազար ախղ արէն արտըսունք կու թափիլ տէիր, էս արտըսունքնիրը փուղ կու շինէիր ու

Էն փուղով օսկէ տնիր... Մէշը փառաւուր ման գու քէիր... զրօշկա, կալասկա, ձիանիր կու սարքէիր, քսանուհինգ ինձալէսին գլխիտ ջարավաշ կու կանգնեցնէիր... Այս, էն շախը կ'օսէի քիզ՝ մարթ իս, Պէպօ, ինչ մարթուն պիտի... ինչ քէփդ գ'ուղէր, Էն սահաթին կու ճարէիր... Էն շախը գիփունքը քիզ գլուխ կու տէին, կու մեծրէին, պատիւ կու տէին ու մէկս մէկու գլուխ կու կոտրէին, վուր քու աճկը նրանց վրայ քաղցը ըլի:

Դուրս է գնում դիմացի դռնից:

## ԱՐԱՐՈՒԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Հարուստ գահին Արութինի տանը: Աչ, ձախ և դիմացը դռներ,  
ամենաշեղ գրապիներով զարդարած: Վերջի դուռը բաց-  
վում է գէպի նախասնեակը, որի լուսամուտներից երեսում  
է պարաէզը: Թահիճի յատակը ամբողջապէս ծածկած է գոր-  
դով, իսկ առաստալից կախած է ոսկեզօծ ջահ հանգած  
մոմերով: Աչ կողմը՝ Խշտեակ [քուշթ]: ձախ կողմը՝ մեծ  
հայելի և բազմոց, որի կողքին ամենաթանկապին սփռո-  
ցով ծածկած սեղան և նրա վրայ հանգած լապտել: Մնա-  
ցած տեղերում, ուր հարկն է, աթոռներ, բազկաթոռներ,  
փոքրիկ սեղաններ, վազաներ, կինկէտներ ու կանգէլաբը-  
ներ դարձեալ հանգած մոմերով, արմաւենիք, կիտրոնի և  
ուրիշ ծառեր, ծաղիկներ, ալբոմներ և պատկերներ: Գիմա-  
ցը, դռան աջ կողմը՝ վակած դաշնակ իր բոլորակ աթո-  
ռով: իսկ ձախ կողմը՝ վառարան և նրա վրայ դրած գե-  
ղեցիկ ժամացոյց, որի սլաքները ցոյց են տալիս ժամը  
ճիշտ երկուսից քառորդ սլակաս: Ժամացոյցը բանում է:  
Սկզբում բեմը փոքր ժամանակ զատարէ է: Ցեղեկ է:

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԻԳՈԼԻ, յիտոյ ՍԱՄՍՈՆ

Գիգոլի, երեւում է դիմացի դռան շեմքում մէկ մշակի  
հետ, որի ծեռքին մէկ մեծ եւ բաւականին ծանր զամ-  
բիւղ զանազան իրեղններով: Զամբիւղում կայ՝ շամ-  
պայն, կասիս, սարդին, զուրպիէլ, Թիթեղի արկղիկով  
խաւեար, Շվէյցարիայի պանիր, վարունգ, առանձին-  
առանձին թղթերի մէջ կարմիր ու սպիտակ ընտիր կե-  
ռաս, մի ուրիշ թղթում կարկանդակ:

Լաւ, թնդ: (Վերցնելով գլխարկը, զամբիւղն առնում է  
մշակի ծեռքից. մշակը գնում է, իսկ ինքը դժուարութեամբ  
ներ է բերում զամբիւղը, վայր գնում եւ յոզնած ընկ-  
նում դիմացի դռան մօտ դրած աթոռի վրայ:) Ո՛ւֆ...  
(Փոքր ժամանակից յիտոյ զիխարկով սրբում է ճակատը եւ  
ցածր ճայնով կանչում:) Սամսօն, Սամսօն, (Մօտենալով  
աջ դռանը, նորից կանչում է:) Սամսօն: (Սամսօնը դուրս  
է զալիս նոյն դանից արխալումիտ կրծքի կոճակները բաց,  
ձեռքին շամպայնի զաւաթ՝ սպիտակ երկար սրբիչով մար-  
քելիս:) Արա, գէթաղկա, Սամսօն ջան, զնա շուատ,  
ախչիկ-պարնին իմաց արա:

ՍԱՄՍՈՆ:  
Էկամբը. ինչի՞ ուշացար. կրակ է վէր ածում ալո-  
շիկ-պարունը:

Գիգոլի  
Վա, 'ես լինչ անիմ. հէստի բան ասաւ, վուր սադ  
աշխարքը ման էկայ, շճարեցի:

## ԱՐԱՐՈՒՅՆԻ ԵՐԿՐՈՐԾ

Հարուստ գահին Արութինի տանը: Աջ, ձախ և դիմացը դռներ,  
ամենաշքեղ զբավրիներով զարդարած: Վերջի գուռը բաց-  
վում է գէպի նախաւենեակը, որի լուսամուտներից երեսում  
է պարտէզը: Թահլիճի յատակը ամբողջապէս ծածկած է գող-  
գով, իսկ առաստաղից կախած է ոսկեզօծ ջահ հանգած  
մոմերով: Աջ կողմը՝ խշանակ [քոչչեթ]. ձախ կողմը՝ մեծ  
հայելի և բազմոց, որի կողքին ամենաթանկազին սփռո-  
ցով ծածկած սեղան և նրա վրայ հանգած լսալուր: Մնա-  
ցած տեղերում, ուր հարկն է, աթոռներ, բաղկաթոռներ,  
փաքրիկ սեղաններ, վաղաներ, կինկէտներ ու կանդէլաբր-  
ներ դարձեալ հանգած մոմերով, արմաւենիք, կիտրոնի և  
ուրիշ ծառեր, ծաղիկներ, ալոմներ և պատկերներ: Գիմա-  
ցը, զռան աջ կողմը՝ փակած դաշնակ իր բոլորակ աթո-  
ռով. իսկ ձախ կողմը՝ վառարան և նրա վրայ գրած գե-  
ղեցիկ ժամացոյց, որի սլաքները ցոյց են տալիս ժամը  
ճիշտ երկուսից քառորդ պակաս: Ժամացոյցը բանում է:  
Սկզբում բեմը փոքր ժամանակ դատարկ է: Ցերեկ է:

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԻԳՈԼԻ, յետոյ ՍԱՄՍՈՆ

ԳԻԳՈԼԻ, երեւում է զիմացի դռան շեմքում մէկ մշակի  
հետ, որի ծեռքին մէկ մեծ եւ բաւականին ծանր զամ-  
բիւղ զանազան իրեղէններով: Զամբիւղում կայ՝ շամ-  
պայն, կասիս, սարդին, զուրպիէլ, թիթեղի արկղիկով  
խաւեար, Շվեյցարիայի պանիր, վարունգ, առանձին-  
առանձին թղթերի մէջ կարմիր ու սպիտակ ընտիր կե-  
ռաս, մի ուրիշ թղթում կարկանդակ:

Լաւ, թնդ: (Վերցնելով զինարկը, զամբիւղն առնում է  
մշակի ձեռքից. մշակը զնում է, իսկ ինքը դժուարութեամբ  
ներս է թերում զամբիւղը, վայր դնում եւ յոզնած ընկ-  
նում զիմացի դռան մօտ դրած աթոռի վրայ:) Ո՞ւֆ...  
(Փոքր ժամանակից յետոյ զինարկով սրբում է ճակատը եւ  
ցածր ձայնով կանչում:) Սամսոն, Սամսոն, (Մօտենալով  
աջ դռանը, նորից իշնչում է:) Սամսոն: (Սամսոնը դուրս  
է զալիս նոյն դռնից արխալուսի կրծքի կոճակները բաց,  
ձեռքին շամպայնի զաւաթ՝ սպիտակ երկար սրբիչով մաք-  
րելիս:) Աբա, գէթաղվա, Սամսոն ջան, զնա շուստ,  
ախչիկ-պարնին իմաց արա:

Սկզբ. ինչի՞ ուշացար. կրակ է վէր ածում ախ-  
չիկ-պարունը:

Վա, 'ես ի՞նչ անիմ. հէսաի բան ասաւ, վուր սադ  
աշխարքը ման էկայ, չճարեցի:

## ՍԱՄՍՈՆ

Վա:

ԳԻԳՈԼԻ

Ումը հարցըի, վրէս ծիծաղեցան. կակլի տօլ էլ,  
առում չ, կլուբնիկ կուլի, կ'օսէ:

## ՍԱՄՍՈՆ

Հալբաթ կուլի, վուր ասաւ... (Տնտղերով զամբիւ-  
ռը:) Մնացածը դիփ բերի՞ք:

ԳԻԳՈԼԻ

Դիփ, դիփ. ամա էն մունդոէկ կլուբնիկը շճա-  
րեցի: եքուցութին կի մէ տիղ խոստացան, կուլի  
ճարինք, կ'օսէ:

## ՍԱՄՍՈՆ

Հոքուն կու վրայ հասնի. զօնապլուղութինը էսօր  
է, էգուց խօ չէ:

ԳԻԳՈԼԻ

Բաս լինչ անիմ, Սամսօն ջան: Զի ըլի, վուր ա-  
ռանց էն եօլա գնայ բանը՛: Հէստի բալիք իմ բերի,  
վուր ամեն մէկը կ'օսիս գոմչի աճկն ըլի:

## ՍԱՄՍՈՆ

Թէ լինձ կու հարցնիս, Գիգոլի, առանց էտ բալին  
էլ փուրը լաւ կու կշտանայ, ամա ախչիկ-պարնի  
խասիաթը գիղիմ, վուրդիոր ըլի, պիտի ճարիս. Կա-  
լոնիումը, նէմինցներու բաղերումը, էնդի հարցըու:  
ԳԻԳՈԼԻ

Հոքիս դուս էկաւ, լինչս ասում... Դուն գնա  
իմաց արա... (Նստում է նոյն տեղը. իսկ Սամսօնը զը-  
նում է դէպի ձախ դուռը:) Խիստ դաթրեցայ:

Նայելով այն դուսն կողմը, յանկարծ տեղից վեր է թռչում:

## ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԷՓԷՄԻԱՅ

ԷՓԷՄԻԱՅ, դուրս զալով նոյն [ձախ] դռնից, ամենաշքեղ  
հաղուստով եւ ակնեղէններով զարդարուած:  
Օ՛հ, շարա էլաւ, էսէնց ուշանալն էլ լինչ է: Յօրէս  
դօնաղնիրը մօդ կուլին. Ենիւ պիտի վրայ բերիս,  
էլի աշխրքի բան կայ:

ԳԻԳՈԼԻ

Հէնդագա ման իմ էկի, ախչիկ-պարուն, Սստուձ  
գիղենայ, էլ ծնդներումս ջան չկայ:

ԷՓԷՄԻԱՅ

Ճանդ դուս զայ, ման արի. բաս ՚մս ման գամի:  
Արա, յիդ դարսէ, տեսնիմ ինչ իս առի:

ՆՍՏՈՒՄ Է:

ԳԻԳՈԼԻ, զամբիւղը բերում դուռմ է էփէմիայի մօտ, առ-  
ջեւը չորում է մէկ ծնկան վրայ եւ մէկ-մէկ ցոյց տա-  
լիս նրան միջի իրեղէնները:

Այ, ախչիկ-պարուն. էս շանփանսկիքը, տամն ու  
ութ արասէն պակաս շապին թօթլիկէն. Երիք թօթլին  
է, թէ աւելնայ, մէկը պիտի յիդ վիկալինին. էնէնց  
իմ բարիշած. էս էն կարմիր լիկօքը, Փրանցուղիմին  
առայ, շուրս ու տաս շահի. առաւ անիծածը. էս  
սարգինկէքը, պէրվի սօրտ, թամամ կէս դուժին է,  
վունցոր ասիր. իսէլի վուխտ հիրիք է. էս Գօնու  
զուրգիէլ. էս կարօբկումը ժիտկա, մէ ջուխտ մինձե-  
րէմէն բերի, պստըկնիր լաւը չկէր. խիստ թաղէն է,

նուր բաց արին. օրթում հաւատ արաւ, վուր էստու վրայ լաւը չի ըլի, կ'օսէ. էս գրանիցի պանիրը, դիղին քարվա ըլի հէնց գիղենաս, մտիկ, է. էս նեմէնցու բալին, էրկու ռանգն է, այ. ամեն մէկը մէ գրվանց գու քայ. (Հանելով Թղթերից մի բանի հան կեռաս) ձեռս կու կտրիմ թէ էստու վրայ լաւը կու ճարվի. էս խիար, ինչ շուշէքն է, տիս, ախչիկ-պարուն. էս պիրօժնի, կանդիտրի շինածէմէն վէր չի գա. բուլկիքն էլ յօլէս կու բերին:

ԷՓէՄԻԱՅ, տեղից վեր Թոչելով:

Վանց թէ վէր չի գա, արա էստի շանց տու. բաս վմւրդի առար:

ԳԻԳՈԼԻ, վերցնելով կարկանդակը և խսկոյն ոտքի կանգնելով:

Միչի փողոցումը:

ԷՓէՄԻԱՅ, իր Թշին ձեռք դնելով:

Արա էտ արարմունք է, Դիգօլի՛. 'Ես քիզ շասիր թէ ֆրանցուղի մօդ առ:

ԳԻԳՈԼԻ

Դիփ մէկ է, ախչիկ-պարուն, Աստուձ գիղենայ. գրվանքումը մէ արասի անմիղ աւելի ուր էի տվի: Տիս ինչ լաւն է:

ԷՓէՄԻԱՅ, տնտղելով կարկանդակը:

Արա, վիս էկազրէրա, նրանց համան ու կտուրն է. Էսէնց բէդալութինն էլ ինչ է: Տար, տար, էս սահաթիս յիդ տու: Ինչ ասում իմ քիզ, լոէ. դուն քու գլխէմէն բանիր մի մօգոնի: Ուրիշ... (Մտածելով): Ուրիշ ինչ ասի, միտս չէ գալի:

ԳԻԳՈԼԻ, կակաղելով:

Կլուր... նի... կա:

ԷՓէՄԻԱՅ

Հա, դուրթ. վմւրդի է:  
ԳԻԳՈԼԻ

Զճարեցի, ախչիկ-պարուն:  
ԷՓէՄԻԱՅ, Թուշը վէր բերելով եւ սաստիկ նեղացած:  
Վոյ, քոռանամ՝ ես:

ԳԻԳՈԼԻ

Վուր չկայ, ինչ անիմ:  
ԷՓէՄԻԱՅ, բարկանալով:

Գծվիլ իս, թէ ինչս ասում: Էրէգ իմ աճկով տեսայ ու իմ բերնով կերպ Դանդումանինց տանը: Ի՞նչ կ'օսէ խալմը. Նրանց տանն ըլլի ու իմ տանը չէ: Գնա, գնա, էս սահաթիս բաղէ բաղ ննդի, գրօշկա բոնէ ու վուրդիոր ըլլի հէնց էս սահաթիս էւէտ ճարէ, թէ չէ էլ հոքով ու մարմնով ինձմէն չիս պլրծնի... Ի՞նչ իս կանգնի, շիս իմանում, քիզ իմ ասում:

ԳԻԳՈԼԻ

Գնում իմ, գնում իմ, ախչիկ-պարուն:  
Կարկանդակը դնում է զամբիւղը եւ կամնում է գնալ:

ԷՓէՄԻԱՅ

Գծվիլ իս, թէ ինչ Աստուձ է խոռվի. Էտ պիրօժնին էլ տար, է:

ԳԻԳՈԼԻ, կարկանդակը վերցնելով:  
Տանում իմ, տանում, ախչիկ-պարուն... (Փնթփըն-թալով): 'Ես էլ չիմ իմանում, ինչ իմ անում:  
Շտապով դուրս է գնում դիմացի դռնից:

## ՏԵՍԻԼ Գ

ԵՓԵՄԻԱՅ, ՍԱՄՍՈՆ

## ՍԱՄՍՈՆ

Խստակ շշկլեցրիր, ախչիկ-պարուն:  
 ԵՓԵՄԻԱՅ, յօնքերը կիտած այս ամբողջ տհոիլում:  
 Քիզ ովէ հարցնում, էքնէկ գիղենամ. դուն տար  
 էստունք կարքի բի ու շալիշ արի ինձ շամանշեցնիս  
 էսօր, Սամսօն, թէ չէ, էլ ինձմէն չիս պրծնի:

## ՍԱՄՍՈՆ

Դիմի լաւ կու՛լի, ախչիկ-պարուն:  
 ԵՓԵՄԻԱՅ

Ինչ ասիլ իմ, լաւ միտոդ պահէ. դիմի լազաթով  
 ըլի, ամեն բանը իր զուխտը մօդ դայ. մէ խօսկով  
 մազէմէն շանց կացնիս:

## ՍԱՄՍՈՆ

Դիմի, դիմի, ախչիկ-պարուն:  
 ԵՓԵՄԻԱՅ

Ու դուն էլ էնէնց հաքի, վուր գիփունանց աճկը  
 վրէն մնայ. սօսանի ատլառ ախալուխը, սիպտայ չեր-  
 քէղէն, մաջէքը կարքով յիդ կու ծալիս, էրծըթէ  
 քամարը...

## ՍԱՄՍՈՆ, խօսքը կտրելով:

Խանջալն էլ կապիմ, ախչիկ-պարուն...  
 ԵՓԵՄԻԱՅ, շարունակելով:

Բաս, քա, էնդուր իո շբախշեցի վուր զանդկումդ  
 պահիս. խանջալն էլ կապէ ու (Զախ ձեռքը աշ ուսից

կրծքի վրայ տանելով մինչեւ ծախս կողքը:) սապիրիս  
 ծամէէն էլ շնէք. Մէ խօսկով՝ գիփունի մօդ լազաթի  
 էսնա, վուր գիփունքն ասին, վուր մարթ իս ու  
 մարթու տանն իս զուլուց անում:

## ՍԱՄՍՈՆ

Վարդ օրը լազաթով չիմ էլի, ախչիկ-պարուն:  
 ԵՓԵՄԻԱՅ

Քու գլխի պատովիլը գիղենայ, մէկ էլ հիմի իս  
 լազաթով, արա էտ ի՞նչ կարք է, լէվրէէլո ման իս  
 գալի: Քանի չէր իմ քիզ ասի, վուր էտէնց ինձ մօդ  
 մի տուն գա. օմքին տեսնէ, ի՞նչ կ'օսէ: Զէիր կանա  
 գոշիս կօճկնիրը կապէ: Լաքիէն պիտի լաքիս ըլի:  
 Աճկիրդ բաց արա, էլի. տեսնում իս խալխի լաքիէքը  
 վունց ին ժաժ գալի, դուն էլ էնէնց ժաժ արի, էլի.  
 Նրանցմէն պակաս մարթու վուրթու մօդ իս, թէ  
 ի՞նչ է:

## ՍԱՄՍՈՆ

Չեռիս բան ունիմ, ախչիկ-պարուն, խօ տես-  
 նում իս:

## ԵՓԵՄԻԱՅ

Տուտուց-տուտուց մի խօսի. 'Ես քիզ ինչ ասում  
 իմ, դուն իմը լսէ: Մէ խօսկով խօտակ, կարքի, քա-  
 ղաքավարի տուն ու դուս կ'օնիս. (Առանձին, կիսաձայն:) թնդ  
 տեսնին ու ճիկըլին... (Սամսօնին:) Մէկէլ լա-  
 քիէրու արսվ չթողնիս, փարվընի պէս ման գու քաս  
 սուփրի բոլորքը. մէ տիդ իմքին մաշուր արիր թէ  
 չէ, չն սհաթին զըլստէ... Բլուզնիրն էլ առչի զամն  
 ինձ մօդ մօդ կու բերիլ տաս:

## ՍԱՄՍՈՆ

Ի՞նչ կ'օսին դոնաղնիրն, ախշիկ-պարուն:  
ԷՓէՄԻԱՅ

Ելի... Մօղէն դռն լաւ զիդիս թէ՛ ես. թնդ տես-  
նին ու սորմին: (Մտածելով:) Էլի ի՞նչ էի ուզում ասի...  
(Մտաքերում է: Հա... (Մի քանի քայլ գնալով:) Դուն  
տար էտունք տիղաւուրէ ու տիս՝ մտէդ չգցիս ի՞նչ  
ասի, հըա...

Ցուցամատով սպառնում է նրան եւ շուապով դուրս  
գնում ձախ դռնից:

## ՏԻՍԻԼ Գ

## ՍԱՄՍՈՆ, մենակ:

Ես հանգի էլ ախշիկ-պարուն. դաղղըղանի իմ  
էկի, էլի՛... էս կնճակդ կապէ, էս էսէնց հաքի, էս  
էնէնց ման արի. շիմ զիդի, թէ ի՞նչ է ուզում ի՞նճ-  
մէն... Փիէ, դաւի է զրուստ, էլի՛... Տօ, քիզ ի՞նչ,  
'ես իմ բանը շինում իմ: (Լոռեթիւն: ) Օհ, հօ, հօ,  
շատ ախշիկ-պարնիր իմ տեսի, շատ նրանց բույիւր-  
միշնիր իմ լսի, ամա սա չափէմէն անց կացաւ: Մէ  
տէր հարցնող ըլի, թէ ով է, ում վուրթի է. իր  
հօրանց տանն, ասում ին, շապիք շունէր հաքնելու...  
ու հիմի՛ փառասիրութ ենէմէն տրաքվում է:

Զեռքը ձեռքին է խփում:

## Տ Ե Ս Ի Լ Ե

## ԱՐՈՒԹԻՒՆ, ՍԱՄՍՈՆ

ԱՐՈՒԹԻՒՆ, ներս մտնելով դիմացի դրնից, զիսարկը ծածկած:  
Ի՞նչ խաբար էր, ի՞նչ ձէն էկաւ:  
ՍԱՄՍՈՆ

Վունչիչ, մղա:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Վունց թէ վունչիչ, իմ անգնավս իմացայ. ով  
էր էստի:

## ՍԱՄՍՈՆ

Օշով, մղա, ախշիկ-պարունն էր:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Ախշիկ-պարունը... ի՞նչ էր ասում:

## ՍԱՄՍՈՆ

Այ, մղա, Գիգօլին էստունք էրի էս սահաթիս.  
Էլի ի՞նչի համա էլ զրդից նրան ախշիկ-պարունն ու  
ի՞նձ հրամաում էր, վուր էստունք տիղաւուրիմ:  
ԱՐՈՒԹԻՒՆ

Հա... Դէ, տիղաւուրէ, էլի՛. էլ ի՞նչ իս շինում:  
Ինչի՞ր է էտի:

## ՍԱՄՍՈՆ

Խմիչկ է, մրգեղէն է, զակուսկէք է:

## ԱՐՈՒԹԻՒՆ, զամբիւղը տնտղելով:

Օհ, օհ, օհ, օհ, կ'օսիս շահ-զադի վուրթիք ու-  
նենանք մեծրած: Դէ, տար... (Սամսօնը կամենում է:

վերցնել զամբիւղը:) Ի՞նչ իմ ասում. քանի պլիքօր իւ  
պատրաստում:

## ՍԱՄՍՈՆ

Ախշիկ-պարունը հրամայից, վուր դրուստ քսան  
ու շուրս պլիքօր ըլի դարսած, կ'օսէ:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Ախշկաս մօդ խօ շղրգից քիզ:

## ՍԱՄՍՈՆ

ՀԷ, աղա, վունչիչ չէ ասի:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Բաս էրկու պլիքօր էլ աւելցնւ ու էս սահաթիս  
գնա ախշկաս էլ ու փեսիս էլ խնդրէ, վուր չնուրդ  
բերին, ու իմ մագիէր կ'օսիս՝ թէ շին գա, խիստ  
բէդամաղ կուլիմ, ասա... Դէ, գնա շուստ, բանդ  
տիս, մի ուշանա:

ՍԱՄՍՈՆ, վերցնելով զամբիւղք:

Է՛ս սահաթիս, աղա:

Գուրս է գնում աշ դրսից՝ մէջքը ծուած զամբիւղք  
ծանրութիւնից:

## ՏԵՍԻԼ Զ

ԱՐՈՒԹԻՒՆ, մնակ, զլարկը վեր առնելով եւ դնելով սե-  
ղանի վրայ:

Սհաթի ներիքին էլ ճաշ կուլի՛... է՛հ, մախլաս:  
(Հայելումը տնտղվում է:) ՀԷ, ջեր էլի լաւն իմ... Ի՞նչու  
է ասկաս. բօյիս շիմշատ է հէնց զիղենաս, էրեսիս  
ուանգը, կ'օսիս, կարմիր վարթ ըլի, մազիրս էլ սիւ

սաթ, ինչ անիմ թէ ներկած է. ով ինչ զիղէ՛ ինչ  
խարար է: (Նստելով խշտհակի վրայ:) Ջէնէլ կնդայ պէս  
մարթու ջէնէլացնող վունչիշ շի ըլի աշխրքումն.  
մարթու տարին էլ, քէփն էլ դիվ կնդամէն է: Օղոր-  
մած հոքի իմ առչի կնիկն էլ լաւ աթմորթի էր, ամա  
բանի լազաթը չէր գիղի: Ինչի՞ նման էի էն շախը.  
հիմի մարթ. իմ էրեսում, ինչ մարթուն պիտի: Զատ  
ջէնէլ ֆրանտ տղայ էրնէլի կուլի տալի ինձ... (Շապ-  
կի թեւնոցները տնտղելով:) Փրահ, սիկտայ ձնւն է,  
վուրգի էր էստունք... (Յոզոց հանելով:) Ամա էս մէ  
բանը կի լաւ չէ ըլում, վուր էսդադա փուղիր է  
միսիլ տալի ինձ... 'Ես' վուր մէ գրօշի համա հոքիս  
տալիս իմ... Փառք Քիզ, Աստուծ, փառք... էս էլ  
հալբաթ Քու դիրք է... Քէփ արա, քէփ արա, Փէ-  
փէլ, ու դուշմնի աճկը հանէ:

## ՏԵՍԻԼ Ե

## ՆԱ, ԷՓԷՄԻԱՅ

ԷՓԷՄԻԱՅ, մտնելով ձախ դռնից:  
Արա էս օրէնք է:

ԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է:

ԷՓԷՄԻԱՅ

Միթամ չիս գիղի... Ուզում իս մէ բաշ թուլա-  
նամ, խայտառակ ըլիմ խալիսումը՝:  
ԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է, վա:

էՓէՄիԱՅ, շարունակելով:  
Դիմունքը վրէս ծիծաղլին, մէ մատը միզլլ դառ-  
նամ աշխրքումը:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Տօ, ախար, ի՞նչ է, մէ ասա, է:

էՓէՄիԱՅ, սուտ լաց լինելով:

Է՞ս է քու օրթում հաւատը, վուր ինձ սիրում ի՞ս:

Աջրիրը սրբում է:

ԱՐՈՒԹԻՒՆ, ձայնը քաղցրացներով եւ վեր կենալով տեղից:  
Ախար, սատանայ խօ չիմ, մէ խօսի, է:

## էՓէՄիԱՅ

Էլ ի՞նչ խօսիմ, մէ բանը մէ ջէր կ'օսին, հաղար  
չէր խօմ շին ասի:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Տէր օղորմած Աստուծ:

## էՓէՄիԱՅ

Ախար, փեսիտ ու ախչկատ վուր կանչում իս էս-  
տի, արա ըլելու բան է:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Է՞ս, լաւ է քու հօրն օղորմի, Փէփէլ. ախար, քինթն  
էրեսէմէն վէր գու քայ:

## էՓէՄիԱՅ

'ես ի՞նչ միդ ունիմ:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Է՞հ, հակառակ իս:

## էՓէՄիԱՅ

'ես իմ հակառակ... ի՞նչ ասիս էրեսիս ասում է  
քու ախչիկը, վրէս քինթը վիր է քաշում, մասիսը  
է զցում, ու հակառակը 'ես ի՞մ... Մէ խօսկին տասը

ջուղաբ է տալի, ի՞նչ շառիր ասիս վրէս է մօգո-  
նում, խուղի հիդ հաւարիլ է ինձ, ու հակառակը 'ես  
ի՞մ... իմ մամէն, ասում է, էլ խիլք չունէ, կ'օսէ:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Վա՛:

## էՓէՄիԱՅ, շարունակելով:

Միթամ դիղիլ իմ քիզ, խիլքէտ արիլ իմ, բուր-  
թու պէս վուրթէնն ուզում իմ, Էնթէնն իմ զցում  
քիզ... վուղչ կայլնքտ ուզում իմ զավթի 'ես, ու  
հակառակը 'ես ի՞մ... էլ կանամ 'ես նրանց էրեսը  
տեսնէ. աթմորթին կու համֆիլէ էստունք:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Էլի դուն պիտի համֆիլիս, հէր օլնած. էս  
սհաթիս ծնող իս յիշվում նրանցը:

## էՓէՄիԱՅ

'ես իմ ծնող յիշվում... նրանց համա 'ես ծնող  
կի չիմ, դուշման իմ, գէլ իմ, շուն իմ, կատու իմ...  
(Լաց լինելով:) Սիվցիլ էր իմ օրը ու էս տուն վուտս  
տուն չէի դրի: Ի՞նչ կ'օնիմ էս փառքը, էս պատիւը,  
էս շնորիրը, էս ակնեղէննիրը. Ծնդ էլի իմ տանը  
ննդած էի էլի՝ քաղցած, ծարաւ, հացի հասրաթ  
ու էս օրը չէի տեսի 'ես...

Ընկնելով բակմոցի վրայ լաց է լինում:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Լաւ է, լաւ, Փէփէլ ջան. (Լացի ձայնով:) սիրտս  
մի պատըռաի... 'ես էլ լաւ գիրիմ ի՞նչ պտուղնիր ին-  
ամա ասում էի, միթամ խալխի խօսելու շդառնանք:

## էՓէՄիԱՅ

Խալխն ի՞նչ գուղէ ասէ. նրա խօսելու հիդ վուր

մարթ ննգնի, ուր կ'էհայ... Խալիսն էն էլ է տառւմ,  
վուր հաշաքար իս միթամ, շատ օմքնու իս զբնի  
միթամ. արա էս ալտալու է...

Վեր է կենում:

ԱՐՈՒԹԻՒՆ

Վըէս շառիր ին մօգօնում...

ԷՓէՄԻԱՅ, շարունակելով:

Վուր միթամ պառաւ իս դուն...

ԱՐՈՒԹԻՒՆ, նեղանում է եւ հազում:  
Հու...

ԷՓէՄԻԱՅ, շարունակելով:

Միթամ մաղիրդ ներկում իս...

ԱՐՈՒԹԻՒՆ, կրկին հազում է:  
Հու, հու...

ԷՓէՄԻԱՅ, շարունակելով:

Միթամ ինձ խափում իս: Ո՞վ կու աւտայ: թնդ  
Խալիսն ինչ գ'ուղէ ասէ:

ԱՐՈՒԹԻՒՆ, հազից ինեղուելով:

Խալիսը տուտուց է, Փէփէլ, դուն շին գիղի վուր  
ջէհէլ իմ... Վուր ջէհէլը կու'լի ինձ վրայ դօշաղ:  
ԷՓէՄԻԱՅ

Արա, 'ես վուր մէկին հասկացնիմ:

ԱՐՈՒԹԻՒՆ

Տօ, դուն էն սարսաղներուն ասա, վուր պառաւ  
դօշաղը լաւ է, կանց ջէհէլ դամբլչն: (Եր մազերը  
բռնհելով եւ զուլսը մօտ տանելով:) Արա, էս ներկած է:

ԷՓէՄԻԱՅ, Արութինի զուլսը բռնհելով եւ ժպտալով:  
Դուշմանը շատ բան կ'օսէ, Արտուշկա ջան: (Համ-  
բռնելով զուլսը:) Մանուշակի հուտ է գալի:

ԱՐՈՒԹԻՒՆ, փաթաթուելով:

Այ, կուղիան, քու մէ պաշը մէ թաքաւուրութիւն  
աժէ: (Փայփայելով:) Ղուրթ վուր խիլքէմէս հանում  
իս: ինչ ասիս վուր քու խօսկը շկատարիմ:

ԷՓէՄԻԱՅ

Բաս շինք կանչում, էլի:

ԱՐՈՒԹԻՒՆ

Ո՞ւմը:

ԷՓէՄԻԱՅ

Փեսիտ ու ախչկատ:

ԱՐՈՒԹԻՒՆ

էշ...

ԷՓէՄԻԱՅ, սուտ լաց լինելով:

Ափսուս իմ գլուխ:

ԱՐՈՒԹԻՒՆ, քաղցր:

Լաւ է, լաւ, քու քէփն ըլի:

ԷՓէՄԻԱՅ, փաթաթուելով:

իմ սիրուն, իմ խօսօր, իմ չէլքան, իմ ակռաւ...

ԱՐՈՒԹԻՒՆ

Ակռաւ... վահ, էտ լաւ էր:

ԷՓէՄԻԱՅ, ծիծաղելով:

Վայ, քուանամ 'ես. ուզում էի ասի, իմ ա-  
ղունակ:

ԱՐՈՒԹԻՒՆ

չա, աղունակը լաւ է:

ԷՓէՄԻԱՅ, փաթաթուելով:

Բաս ինչ իս, վուր աղունակ չիս:

ԱՐՈՒԹԻՒՆ

'Երիշս էլ կու'լի նման աղունակինը... Աղունակն

էլ դուն իս, Փէփէլ, (Փաթաթուելով:) վարթն էլ ու  
մանուշակն էլ:

## ԷՓԷՄԻԱՅ

‘Ես վարթ իմ ու դուն էլ բլբուլ, Ա’րտուշկա ջան:  
ԱՐՈՒԹԻՒՆ

Հա՛, գթար. դուն վարթ իս ու ’ես էլ բլբուլ.  
Խիստ իմ սազ գալի: (Էփէմիայի թշին մատով խփում  
է եւ թիւ: ) «Կօկօրօ վարդօ, ար դամագդօ, վար մօ-  
նա շէնի: »

## ԷՓԷՄԻԱՅ, նոյնպէս Թիւ:

«Պիրզէդ գաքվս խալի, շավ շավի թվալի, տուր-  
փաթ մշվէնի շէն: »

## ԱՐՈՒԹԻՒՆ

Վահ, հէր օխնած, ասում իս, ասա, վուր ջանումս  
նստի, է:

## ԷՓԷՄԻԱՅ

Է՛հ, ըա դրօս է, էրնէկ գիղենամ, աշխրքի բան  
ունիմ:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Կէթաղվա, Փէփէլ ջան:

## ԷՓԷՄԻԱՅ

ՇՌ՛ւհ, քիմէն խօմ չիմ պըծնի ու, հըա: (Երգում է  
Արութինին շողոքորելով: )

«Կօկօրօ վարդօ, ար դամագդօ, վար մօնա շէնի,  
Պիրզէդ գաքվս խալի, շավ շավի թվալի,

Նախվա մսուրս շէնի: »\*) (Եւ այլն: )

\*) Վրացերկն է. —

Կոկոն իմ վարդիկ, մի թողնիր ինձ, քո ստրուկն եմ ես;

## ՍՐՈՒԹԻՒՆ

Օ՛հ, քու հոքուն մեռնիմ, Փէփէլ ջան... (Գրկում  
համբուրում է: ) Սաղ աշխարքը շուռ կու տաս դուն...  
ԷՓԷՄԻԱՅ

Դիղիս ինչ ասիմ, Արտուշկա ջան... (Զեռքը դնե-  
լով Արութինի ուսի վրայ: ) Միը հալիլէքն էլ պէտկը  
չէ, մօդէն անց է կացի. մէ տիղ տեսիլ իմ, ջուխալը  
քառսուն ու հինգ թուման ին ասում... (Արութինը,  
առանձին, դէմքը ծամածում է: ) Ուզում էի բէհը տա,  
ամա առանց քի հարցնելու գաբէդվա շարի:

ԱՐՈՒԹԻՒՆ, Էփէմիայի թշին ձեռը տալով:

Ջատ օյինբազն իս:

## ԷՓԷՄԻԱՅ

Կէթաղվա, Արտուշկա ջան:

ԱՐՈՒԹԻՒՆ, մտածելով եւ բարձր:

Քառսուն ու հինգ թուման...

## ԷՓԷՄԻԱՅ

Էն շէնքի իմքինը բաս պմկաս կուլի՛, քա:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Էնդու վրայ հիմի քիչ ցածրն ըլի, ինչ հաջաթ:

## ԷՓԷՄԻԱՅ

Արա, վիս էկագրէբա. Էնդու վրայ ցածրը խօմ  
միրիրն է... ամա վուր պէտկը չէ... Խաչը գիղենայ,  
ամանշում իմ, վուր էրեսս մէշը տեսնում իմ:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Տօ, հոքիս հանեցիր խօմ... դիվ տակն ու վրայ  
արիր էսղանցօրէն: Ախար՝ էս զալէն պէտկը չէ...

Եղնսիդ ունիս՝ խալ, սկսէ աշեր, տեսիդ կարօտ եմ ես:

Էս մէրիլը պէտկը չէ... էս զանալէսկէքն էսէնց չէ...  
Էս գգակդ փոխէ... էս դիմիկիտօնի մագիէր պլատնօ  
հաքի...

ԷՓէՄԻԱՅ, փաթաթուելով:  
Թէ ինձ կու սիրիս, Ա'րտուշկա ջան:

Քիդ վուր չիմ սիրի, բաս մւմն իմ սիրում... (Փոքր  
լրութիւնից յետոյ): Ամա դուն էլ զուրթ խիստ իս սի-  
րում ինձ, Փէփէլ:

ԷՓէՄԻԱՅ  
Զարթնի քիդ մվ ունիմ աշխարումը. իմ հոքին  
ու մարմինը դուն իս, իմ շունչն ու կենթանութինը  
դուն իս:

ԱՐՈՒԹԻՒՆ  
ՕՇՈՎ աճկումդ չէ գալի:

ԷՓէՄԻԱՅ  
Աբա, միխկ չէ, Արտուշկա ջան, լինչս ասում.  
ախչիկը քի պէս մարթ ունենայ ու նըա աճկումն  
էլի օմքին դու քայ աշխարումը:

ԱՐՈՒԹԻՒՆ  
Բերիլ տու, բերիլ տու հալիլէքը, (Համբուրելով):  
գէնացվալէ սուլշի:

ԷՓէՄԻԱՅ, փաթաթուելով:  
Աբա, մվ կանայ ասի, վուր դուն գոփաղ ու գըշ-  
լող իս:

ԱՐՈՒԹԻՒՆ  
Արութինի փողպատն ու շապիկը ուղղում է:

ԱՐՈՒԹԻՒՆ  
Խիստ իս ֆրանտացնում, ամա քու կարմիր բան-  
տի պէս չի ըլի, Փէփէլ:

ԷՓէՄԻԱՅ, շարժնակելով:

Մարտափ: (Աւարտելով գործը, վորք ինչ հնոանում է  
Արութինից ևւ այսպէս նայում նրան:) Աբա, վուր ֆրան-  
տը կուլի քի պէս:

ՏԵՍԻԼ Ը

ՆԲԱՆՔ, ԳԻԳՈԼԻ

ԳԻԳՈԼԻ, ներս մտնելով զիմացի զոնից՝ զիսարկը կռնա-  
տակին, մէկ ձեռքին փոքրիկ զամբիւդով ելակ, կա-  
նանչ տերեներով ծածկած, միւս ձեռքին թղթով կար-  
կանդակ:

Այ, ճաղեցի, ախչիկ-պարուն. ամա էլի կակլի  
տու չէ կլուբնիկէն: Թէգուզ սպանէ, էլ էստու վրայ  
մինձ չի ըլի, կ'օսէ:

ԷՓէՄԻԱՅ, տնտղելով ելակը:

Այ, հէնց էս էլ ասում:

ԳԻԳՈԼԻ, ուրախ:

Ճինց էն է զրօշիէն ուղում էի բռնի, տեսնիմ մէ  
կինտո վուրդիոը ճարիլ էր: Ախար, առուտեհան էլ  
օչով շթողի, դիփունանցն ասի:

ԷՓէՄԻԱՅ, չարանարով:

Ա'լս, Գիգոլի, քու բէգասլութինը խօմ ինձ իս-  
տակ սպանում է. աբա, վուր օրն իմ 'ես կինտօիմէն  
իմքին առի, վուր հիմի էս էլ իս մօգօնի. շէիր կանա  
դուն ինքդ գնա բաղը:

ԳԻԳՈԼԻ, շփոթուած:

Ախչիկ... պարուն...

**ԱՐՈՒԹԻՆ, ԷՓԵՄԻԱՅԻՆ:**  
Վա, հէր օխնած, էլի բաղի կուլի. ախար, կինտոն ինքը իս չէ շինում:  
**ԷՓԵՄԻԱՅ**

Արա, վիս էկաղըէքա. նրանց կիխտուտ ձեռնիրը,  
(զգուանքով:) թը՛, թը՛, թը՛... Վայ, փուր դօնաղնիբը պիտի գան յօրէս, թէ չէ էս սհաթիս ակօշկէն կ'օծէի դիփ մէտի... (Գիմելով Գիգօլուն.) Ուրիշ, էտ ի՞նչ է:

**ԳԻԳՈԼԻ**  
Էս էլ պիրօժնիքն է. փոխեցի:  
**ԷՓԵՄԻԱՅ**

Հա, (Տնտղելով կարկանդակը, կանչում է.) **Սամսօն,**  
**Սամսօն:**

**ԱՐՈՒԹԻՆ,** Գիգօլու ձեռքում ելակը տնտղելով:  
Դնա ու գնա, Փէփէլ, լիստ թաղէն է. կ'օսիս  
ձեռով չէ քաղած: (Վէկ հատ ելակ թերանն է զցում եւ  
ծամելով:) Լաւն է. իմ մամա Կիրակուսն էլ առանց  
էս եօլա շէր գնում:

**ԳԻԳՈԼԻ**  
Էլ իս բան շնուիք, ախշիկ-պարուն:  
Ազ դոնից մտնում է Սամսօնը արխալուսի կրծքի  
կրծակները դարձեալ բաց, ինչպէս առաջ:

ՏԵՍԻԼ Թ  
ՆՐԱՆՔ, սկզբում նաև ՍԱՄՍՈՆ

**ԷՓԵՄԻԱՅ;** Գիգօլուն:  
Ի՞ թաս բան չունի՞մ... Մնւլափ էստի: (Սամսօնին:)  
Էս կլուբնիկը տար սարդափն ու էս պիրօժնին էլ  
վաղերումը լաւ բարաթ շինէ: (Սամսօնը վերցնում է:)  
Էլի դօշիտ կոճինիրը բաց տուն էկար ինձ մօդ: Սա-  
տուձ գիղենայ, վիրչի գամն իմ ասում, թէ մէկ էլ  
տեսիլ իմ քիզ էտէնց, էլ մէ սահաթ շիմ պահի քիզ:

ԳԻԳՈԼԻ, առանձին, զլուխը շարժելով:  
Օ՛հ, օ՛հ, օ՛հ, կրակի կտուր է:

**ՍԱՄՍՈՆ**

Բանումն էի, ախշիկ-պարուն:  
**ԷՓԵՄԻԱՅ,** բարկանալով:  
Զնւղար էլ է տալի: (Արութինին:) Արա, պահելու է:  
Գիգօլին, առանձին, Թափ է տալիս օձիքը:  
**ԱՐՈՒԹԻՆ,** Սամսօնին սպառնալով:

Հըմա, մնակայիթ կաց... Դէ, գնա բանիտ, էլ ի՞նչ  
իս էտի կանգնի: (Սամսօնը զլուխը շարժելով դուրս է  
զնում աջ դոնից, զամբիւլն ու կարկանդակը ձեռքին: Յե-  
տոյ Էփեմիային, ցածր:) Ախար, ձեռին բան ունէ խիղ-  
ճը, տեսնում իս քրանքումը ծլծլում է. բաս էմարթ-  
լէրի:

**ԷՓԵՄԻԱՅ,** շարունակելով:  
Զէ, խիստ է խարար ըլում, ախար, է: Էսօր դօշը  
բաց տուն էկաւ, էքուց առանց ախտուիս կու տուն

դայ: Բջի համարցակութինը վիս էկաղքէգա: Մէ-մէ  
ախչիկ-պարուն էլ կայ, իրանց բջի հիդ մատահաթ-  
նիր ին անում. խօ զիդիս՝ Կս հանդի բանիր շիմ  
սիրի: Լաքիէն պիտի լաքիա ըլի:

Լաւ է, լաւ, էս մէկը բախշէ. Կս կու խրատիմ  
իրան: (Առանձին:) Բախտաւուր մարթ իմ, Կս ու իմ  
հորին... (Գնալով ձեռքերը ետեւը դարսած եւ համրիչը  
ծեռքին, կէս ճանապարհից կիսածայն երգում է:)

«Պիրդէդ դաքլս խալի, շավ շավի թվալի,  
նախվա մոռւրս չէնի:»  
Գուրս է զնում ձախ դռնից:

### ՏԵՍԻԼ Ժ

#### ԷՓԷՄԻԱՅ, ԳԻԳՈԼԻ

##### ԷՓԷՄԻԱՅ

Հէ, մէ հէնց ապրիս, Գիգօլի. հասկացրն էն  
լուսածին, վուր քաղաքավարի կենայ. իմանում իս,  
ինչ իմ ասում:

##### ԳԻԳՈԼԻ

Իմանում իմ, իմանում, ախչիկ-պարուն, (Գլուխը  
յատ զեսով:) բաս շիմ իմանում: Աւրիշ ինչ էիր հրա-  
մառւմ:

##### ԷՓԷՄԻԱՅ

Այ, Գիգօլի, էս սահաթ իս զնա, Թաղլիթինց մա-  
զագինումը հալիլէք իմ տեսի, ջուխտը քառսուն ու  
հինգ թուման ին ասում, հէնց էս սհաթ իս էւէտ վա-

զեցնիլ տու. թէգուղ շնորս մշակ բռնէ, էգէրա ինչըու  
զօնաղներու գալը վրայ հասցնինք:

Է՛ս սհաթիս, աղչիկ-պարուն. ամա աղէն ասիլ է:

ԷՓԷՄԻԱՅ, բարկացած:

Հիմի դուն. աղէն ես իմ, հրամառում իմ, էլի:  
Գրսից աղմուկ է լսվում:  
ԳԻԳՈԼԻ

Է՛ս սհաթիս, էս սհաթիս, ախչիկ-պարուն:  
Գիմացի դասն մօտ դրսից լսվում է ՍԸԸՄՍՕՆԻ  
ձայնը՝ Կամցի, գնամ ասիմ, է... ԳԻԳՈԼԻ ձայ-  
նը՝ Կացի-մացի շիմ զիդի, թնդ թէ չէ, էս  
սահաթիս...

### ՏԵՍԻԼ ԺԱ

#### ՆՐԱՆՔ, ՊԵՊՈ

ՊԵՊՈ, ներս մտնելով զիմացի դռնից, զիմարկը ծածկած  
եւ զարդի հագուստով:

Փիշ... Գլուխը յար ըսր քայլում է առաջ գլուխ է տալիս:

##### ԷՓԷՄԻԱՅ

Ի՞նչ իս ուղում. ով իս:  
ՊԵՊՈ

Ով իմ. զօնաղ իմ, վա:

##### ԷՓԷՄԻԱՅ

Գունչ միր զօնաղ:

ՊԵՊՈ  
ՀՅԱ: էՓԵՄԻԱՅ, ծիկայ տալով:

Ա... Օտկեցէք, օտկեցէք, ով է քրիստոնայ:  
Գուրս է վազում ձախ դռնից:

## ՏԵՍԻԼ ՃԲ

ՊԵՊՈ, ԳԻԳՈՒԻ

ՊԵՊՈ, տաջ գալով, առանձին:  
Այ, քնթեմէն դուս գայ էն հացը, ինչ մարթ ձիր  
հայն ուտէ, հըմ:

ԳԻԳՈՒԼԻ

Ի՞նչ իս ուղում, ախպէր, ի՞նչ բան ունիս:  
ՊԵՊՈ

Հալրաթ բան ունիմ, գուր էկիւ իմ, էկիւ, վա:  
ԳԻԳՈՒԼԻ

Զի ըլի՞, գուր մինք էլ իմանանք:  
ՊԵՊՈ

Ի՞նչ կու աւելնայ քիզ. գուն գնա աղա Արութի-  
նին իմաց արա, գուր ՚իս էստի իմ:  
ԳԻԳՈՒԼԻ

Ախար, գուն ով իս:

ՊԵՊՈ

՚Ես... (Նստելով իշտեակի վրայ:) ՚իս իմ:  
ԳԻԳՈՒԼԻ

Վա՛...

## ՏԵՍԻԼ ՃԲ

ԱՐՈՒԹԻՆ, ներս վազելով ձախ դռնից:

Ի՞նչ խաբար է, ի՞նչ խաբար:  
Տնանկով Պէպօին, մնում է սառած:  
ՊԵՊՈ, վեր կենալով տեղից, գլխարկը վեր է առնում և  
զլուի տալիս:  
Յարի աշողում, աղա Արութին:  
ԱՐՈՒԹԻՆ, Գիգօլուն, ցածր:  
Գուն գնա բանդ ախս:  
ԳԻԳՈՒԼԻ, առանձին:

ՂԱՐԵԹ, հալիլէքը:

Գուրս է վազում դիմացի դռնից:

## ՏԵՍԻԼ ՃԲ

ՊԵՊՈ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ

Հը, ուր իս էկիւ, ախպէր:  
ՊԵՊՈ

Այ, համեցէք նստի:

Ինքը մօտ բաշելով մի աթոռ, նստում է:  
ԱՐՈՒԹԻՆ, նստելով իշտեակի վրայ, առանձին:  
Իմ տանը սա է մօհբաթ անում ինձ: (Պէպօին:  
Ախար, էս շախն ուր իս էկիւ:

## ՊԵՊՕ

Կուշտը քաղցածին ի՞նչ է հարցնում... Յօդազս  
մի դուս կտրի, աղա Արութին. թէ էս սհաթիս չիս  
տա, վարցկ կ'օնիս, վուր ինձ սպանիս էսաի էւէտ:  
ԱՐՈՒԹԻՒՆ

Թէ իմքին պարտ իմ, ախպէր, լամ գէմարթլէրի:  
Ում փուղն իմ կերի, վուր քու փուղն ուտիմ.., ինչոր  
բարաթ էր ասում... Դթար, բերիլ ի՞ս:

ՊԵՊՕ, առանձին, կրծքին խփելով:  
Ըմ... (Բարձր:) Բարաթը չկայ, իս գիղիս. դուն  
քու դաւթլընելումը գթար թէ չէ:  
ԱՐՈՒԹԻՒՆ

Իմ գաւթըլնելումը շատ պատեցի, հայս Աստծու,  
ամա մէ ասօ էլ չգթայ ձիզ համա:

## ՊԵՊՕ

Բաս ի՞նչ անինք հիմի:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ պիտի անինք. դուն քիզ համա, 'ես ինձ համա:  
Գրպանից հանում է սաթէ համրիզը և զցում:

## ՊԵՊՕ

Վունց թէ՝ դուն քիզ համա, 'ես ինձ համա: Բաս  
քու մտկումը պարտ չիս ի՞նձ:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Ախպէր, ի՞նչ պիտի պարտենամ. բարաթ դուն  
չունիս, գաւթքումս 'ես վունչիչ չունիմ զրած, ի՞նչ  
պիտի պարտենամ քիզ:

## ՊԵՊՕ

Բաս քու սրտի դաւթքումն էլ վունչիչ չկայ զրած:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Այ Սրաի դաւթարը վուրըն է: Վաստակած այսուն  
թաս քու խճպանքը վունչիչ չէ ասում քիզ, էլի-  
խօ գիղիս, վուր պարտ իս:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Վուր գիղենամ խօ կու աամ, էլլ. էլ ուր իմ  
խօսեցնում:

## ՊԵՊՕ

Բաս Գիլօն ուր է ասում... Նրա հալալութինը  
գիլփունքը գիղին:

## ԱՐՈՒԹԻՒՆ

«Մէլամ», ասում է, «թավիսի կուղի մօխկանա  
մօծամէթ:»\*)

## ՊԵՊՕ

Աղա Արութին, վերիւը խօ Աստծու կայ ու քու  
սիրան էլ է կարթում, իմ սիրտն էլ, արի Աստձէմէն  
ձեռը մի վիկանի:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ շառիր իս մօգօնում գլխիս, ախպէր. օմքին  
լոէ, հէնց կու գիղենայ զուրթ իս ասում:

## ՊԵՊՕ

Դուն գիղիս վուր զուրթ իմ ասում: Քու վուրթ-  
կերանց արիւ սադաղա խղճա միզ: Էտ փուզը 'ես  
ի՞նձ համա շիմ ուզումս...

## ԱՐՈՒԹԻՒՆ, խօսքը կտրելով:

Տէր օղորմած Աստծու:

\*) Վրացերկն է. — Աղուէմն իք պոչը բերեց վկայ:

## Պէջ0, շարունակելով:

Մուլափ, մուլափ, ինչըու վիրչն անգամ դի. Էտ փուղով իմ քուրը նշած է, խոստացիլ ինք, պիտինք տա, ու թէ էս սահաթիս շտվինք, քվիլս թնդնում ին, ուրիշ ախչիկ ին ուզում էս գիշիր: Ախար, մէ Աստծու այեաղ դադաստանը միտդ բի, է... խօ քիդ էլ կու խօսեցնին էնդի, ինձ էլ. ինչ ջուղար կու տաս, վուր չիս տալի:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Փիշ... (Մտածմունքի մէջ է ընկնում:) Այեաղ դադաստանը դիդեհայ վուր դրուստ միտս չէ էտ պարտկը:

## Պէջ0

'Ես ասում իմ դրուստն, էլիշ. ինձ չիս աւտում:  
ԱՐՈՒԹԻՒՆ

Վա, էտ վանց կուլի, Պէպան. ամեն մարթ վուր զայ ու էտէնց խօսի, տասը միլիօն էլ վուր ունենամ, մէ օրումը կու համնի: 2Է, ախարէր, միր առուտրի հէսաբը էտէնց չէ:

Պէջ0, վեր կենալով տեղից եւ դիմարկը ծածկելով:  
Բաս չիս տալի, էլի:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Պարտկով կի վունչիշ աալացու չիմ, ախարէր. ամա քուր իս մարթու տալի՛, ջնւխտ աճկիս: (Ծոցից հանում է պօրտմօնէն) Ըահա, (Թղթաղրամ տալով:) վարցկ բան է, բռնէ, ախարէր:

Պէջ0, զիմարկը վեր առնելով, զլուխ է տախս:  
Այ, Աստուծ վուրթիքդ զօրացնէ:

Առնում է փողը եւ դիմարկը ծածկում:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Է՛տ հինգ թուման... համբքէ, (Պէպօն գոնատիւմ է՛) գուռստ հինգ թուման է... չինգ թուման էլ, դուք նօքս անց կացի, էնդի կու տան. Էս սահաթիս օմքին կու զրգիմ: Գնա, ախարէր, Աստուծ բարի վայելումը տայ:

Պէջ0, փողին նայելով եւ շփոթուած:

Հինգ թուման ու հինգ թուման... (Լոռթիւն:) Մնացածը... Ախար, իմ քվիր համա հարուր թուման ինք խօստացի:

## ԱՐՈՒԹԻՒՆ

'Ես ինչ անիմ, վուր խօստացիլ իք. բէհէսար նամաղուլ իք արի, վուր խօստացիլ իք. ում փուղն էիք խօստանում, վուր խօստացիլ իք: Մարթ իլ լիէրի գօրա կու ձքէ վմւար թէ չէ: Դուք էլ վուր հարուր-հաբուր թումնիք իք խօստանում, էլ ուրիշն ինչ անէ: Էս ինչ խարար էլաւ աշխարհն, ախարէր. էլ օշովու համա չափս ու ձիւ չկայ:

## Պէջ0

Միք բանը մինք գիդինք, պարուն, ձիք բանը դուք. խօստացիլ ինք, միք փուղն ինք խօստացի, քիզ ինչ դաւի:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Խօստացիլ իս ու տար իրան տու, էլի. էլ ինչ իս ուզում:

## Պէջ0

Իս տու, վուր տամ, է. ախար, էս վուր տալիս իս, մասխարա իս զցում, թէ ինչ խարար է:

## ԱՐՈՒԹԻՆ

Արիու սրապէսներուն վարցկ արտ: Տօ, ինչնվ  
շիս իմանում, զուր զունչիչ պարտ շիմ 'ես ձիղ ու  
էտ էլ ինչոր տալիս իմ, հոքուս համա բախշում իմ:  
**ՊԵՊՈ**

Բախշում իս... Գանա ես մխկատ իմ, էկիլ իմ  
օղորմութին իմ ուղում քիմէն. 'ես իմ հային իմ  
ուղում, իմ հանը. ինչ կօնիմ 'ես քու բախշիչը:

## ԱՐՈՒԹԻՆ

2իս ուզի ու էստի տու, ինձ պէտկը զու քայ:  
Ախկատ ու հմալար, զուր կ'օսին, էս է, այ: Բի,  
էլի, բի. ինչ իս թամաշա անում:

## ՊԵՊՈ

Բառ թամամ չիս տալի, էլի:

## ԱՐՈՒԹԻՆ

Տօ, գժիլ իս, թէ ինչ խարար է. ինչ իս ուղում  
ինձմէն: Զօսով պարակ կուլի աշխաքումը՝ շինքս  
իս զցում:

## ՊԵՊՈ, առաջ դնալով:

Արա օրթում կի թէ պարտ շիս, օրթում կի,  
էլի. մարթ կուլիս՝ օրթում կ'ուտիս:

## ԱՐՈՒԹԻՆ

Օ'րթում, հաւատ, Աստուծ, (Պէտօն զարհուրանը է  
արտայայտում: ) 'Երդինք, իմ զուրթ կերանց արիւը զի-  
դինայ, զուր զունչիչ պարտ շիմ...  
**ՊԵՊՈ, զայրացած:**

ԱՇ, Աստուծ ու 'Երդինք խռով կենայ գլխիս:  
(Խփելով փողը Արութինի երևին: ) Հը', բռնէ, պճկդ դի,  
կնդատ համա իմքին կ'ունենաս առնելու:

ԱՐՈՒԹԻՆ աղաղակելով եւ տեղից վեր թռչելով:  
Օտկեցէք, զարանւլ. սպանեցին, մարթեցին... Ո՞վ  
կաք էտի...

Ներս են թափլում՝ ձախ զռնից էփէմիան, աշ  
գռնից Սամօնը, հագնուած և զարդարուած,  
ինչպէս սյատութիւն էր Էփէմիան երրորդ տեսի-  
լում, իսկ զիմացի գռնից երկու այլ ծառայ ֆրա-  
կուլ և սպիտակ ձեռնոցներով: Տեսարան:

**ՏԵՍԻԼ ԺԵ**  
ՆՐԱՆՔ, ԷՓէՄԻՅՅ, ՍԱՄՈՅՆ, ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱՅ

**ՊԵՊՈ**, ձախ ձեռով ցոյց տալով ծառաների վրայ:

Է՞ս է քու մարթութինն, էլի... (Երկար լուռթիւն: )  
ԱՇ, հառամ ըլի քիզ քու հարստութինը:

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթուած, ծառաներին:

Տօ, օտկեցէք, է. ինչ իս թամաշա անում. տես-  
նում իք՝ ուղում է սպանի ինձ:

Սամօնը և ծառաները մօտենում են Պէտօին:

**ՊԵՊՈ**, ծառաներին մղելով:  
Մուլափ, զէնը... (Արութինին: ) Էս օսկէ պատիրը,  
զուր սաբքի իս, ում փուղով... Հաղար ինձ պէսնե-  
րուն թանիլ իս, զանա. քար ու կիրը միր արնով  
իս շաղըղի, զանա. զիփունանց աճկիրը արլանդվա  
իս արի ու հիմի ծանդը ու բարակ քիզ համա նըս-  
տած քէփ իս անում, էլի:

**ԷՓէՄԻՅՅ**

Դնու արէք, դնու արէք:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Դնւս, դժւս, ասում իմ: (Նառաներին:) Դնւս արէք.  
չեք իմանում:

Նառաները յարձակվում են Պէտօի վրայ:

## ՊԵՊՕ

Դնւս... (Նառաներին նորից մղելով:) Դէնը, դէնը:  
(Նառաները փոքր ինչ հեռանալով կանգնում են դիմացի  
դռան առաջ: Արութինին:) Փուղիրս հաշա իս ուտում,  
ու զնւս էլ իս անում, էլի... (Լոռութին:) Դուս կ'էհամ,  
դուս կ'էհամ. չարէս լինչ է, զուը քունն է, տէրը  
զուն իս էստի... Սմա լաւ գիլացի, պարուն Արու-  
թին, էս արարմունքը քիզ չի մնա... վերիվն Աստուձ  
կայ, քնթէմէտ կու հանէ քու անօրէնութինը... (Նա-  
ռաներին հրելով:) Դէնը, դէնը...

Գուրս է զնում դիմացի զոնից:

ԱՐՈՒԹԻՒՆ, Պէտօի ետեւից, ծառաներին:

Գնացէք, գնացէք հիդը, վունչիշ շտանէ, վուն-  
չիշ շփախցնէ:

Նառաները գուրս են վագում Պէտօի ետեւից:

## ՏԵՍԻԼ ԺԶ

ԱՐՈՒԹԻՒՆ, ԷՓԵՄԻԱՅ

## ԱՐՈՒԹԻՒՆ

ԷՌԱԽՆ էլ լստուծ:

Կունում է եւ փողերը հաւաքում:

## ԷՓԵՄԻԱՅ

Գիմժ է էն մարթը, թէ էս ինչ խարար է... ելախտ  
էլ էնէնց վախեցրուց:

ԱՐՈՒԹԻՒՆ, փողերը ծոցը դնելով:

Արի ու սրապէնսերուն վարցկ արա հիմի:

## ԷՓԵՄԻԱՅ

Էս ինչ բան է, ախար, չիս ասի:

ԱՐՈՒԹԻՒՆ

Աստուձ վնչ գիղէ նրա գլուխը. քուը իմ մարթու  
տալի, կ'օսէ. Ես ինչ անիմ զուր մարթու է տալի:

ԷՓԵՄԻԱՅ

Բաս էն ինչ էր ասում, թէ փուղիրս հաշա իս  
ուտում, կ'օսէ:

## ԱՐՈՒԹԻՒՆ

Աբա, քիմէն չիմ արմընում, էփէմիայ. փնւղ հաշա  
ուտիմ ու էն էլ նրա պէս մարթունը, չիս ճանշ-  
նում ինձ:

## ԷՓԵՄԻԱՅ

Էտ փուղիրը վուր ծուցդ գրիր, նրանը շէր բաս:  
ԱՐՈՒԹԻՒՆ

Նրա հօրն օղորմի. վուխչ իմ կայինքն էլ նրանը  
կուլի, բաս... էկաւ, թէ խիղճ մարթ իմ, կ'օսէ,  
քվիրս համա բաժինք չունիմ, կ'օսէ, քու վուրթկե-  
րանց արիւ սաղալա օտկէ միզ, կ'օսէ. Ես էլ ախ-  
մախ-ախմախ հանեցի ու բախշեցի: (Նեղանալով:) Ճնո-  
րակալութենի մագիէրն էր, վիկալաւ ու ճակտիս  
խփից. քիշ է, կ'օսէ:

ԷՓԵՄԻԱՅ, Թուշը վէր բերելով:  
Վոյ, քոռանամ՝ ես, դմւթիւ իս ասում, Արութին  
ջան:

ԱՐՈՒԹԻՆ

Բառ սնես իմ ասում:

ԷՓԵՄԻԱՅ, չարացած:

Քու հախն է, խիստ լաւ էլ է արի... էտ էն գի-  
ղենայ, զուր ժամէմէն դուս զալիս, հալուր ախկատ  
էլ վուր ըլի դուանը, դիփունանց ձեռին՝ (Գործողու-  
թեամբ ցոյց տալով) «բռնէ, բռնէ», բռնէ... իժում  
էտէնց կու թողնիս էտ անպատութինը»:

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ պիտի անիմ:

ԷՓԵՄԻԱՅ

Աշխարքի լավիր գլուխտ ածաւ...

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ անիմ:

ԷՓԵՄԻԱՅ

Վոյ, քոռանամ՝ ես. էլ բան չմնաց, զուր քիզ  
շասաւ, ու էնդադա բէարութինը դուն կ'ուտիս։  
Ի՞նչ կ'օսին խալիս։

ԱՐՈՒԹԻՆ

Խալիսն ի՞նչ գիդէ, գլուխը քարը տայ. թաղ, խիդ  
մարթէ։

ԷՓԵՄԻԱՅ

Վոյնց թէ խալին ի՞նչ գիդէ. էնդադա բջերանց  
մօդ չէլը, զուր վրէտ բդաւեցաւ ու ճշաւեցաւ։ (Զա-  
փականցելով Պէտօի խօսքերը) Աշխարք ու երգիր իս  
թալնի, կ'օսէ, քսան ու հինգ հաղար խղճի տուն իս

քանդի, կ'օսէ, էս արարմունքնիբը քիզ չի մնա, կ'օսէ,  
ու էստունք պիտի մարսիս դուն։ Բջերանց բերնու-  
մը իմքին կու կանգնի՛. չիս գիդէ, զուր էքուց ինչկի  
էս վախտը վնիւչ քաղաքը կու իմանայ։ Մարթ ըլիմ,  
զլիիս գգակ ունենամ ու ղարուլ անիմ, զուր էս  
հանգի պաժարնին իմ տանը ինձ անպատիւ անէ,  
տոէ զուր նրա փուղիբը հաշա իմ ուտառւմ. Ծավաթ  
ինչ ասիս ասում ին քիզ զրայ ու հիմի պակասը  
թամամ ըլի՛...

Նայում է դիմացի զուան կողմը։

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, ԳԻԳՈԼԻ

ԳԻԳՈԼԻ, զիսարկը ձեռին, շտապով ներս մտնելով դիմացի  
դրնից։

Հալիլէքը բերի, ախչիկ-պալուն։

ԷՓԵՄԻԱՅ, յանկարծ փոխուելով եւ ուրախ։

Հալիլէքը... (Շտապով զնում է. կէս ճանապարհոց  
Արութինին, յափշտակուած) Մէ արի, մէ արի, Արաւշ-  
կա ջան, ախս թէ ինչ հալիլէք է, ինչ անափկա, նեժ-  
նի հալիլէք... (Կանչելով) Սամսոն, Սամսոն...

Շտապով զուրս է զնում դիմացի զոնից; Գիգօլին եւ  
Սամսոնը՝ որ զուրս է վազում աջ զոնից, հե-  
տեւում են նրան։

## ՏԵՍԻԼ ԺԸ

ԱՐՈՒԹՅՈՒՆ, մենակ, երկար լուսիւմից յետոյ:  
 Տօ, զնուրթ, ինչ օյին էկաւ զլխիս էն լօթի պաժարնին... էլ մինձ ու պստիկ չկայ աշխաքումը... էն հանգի ախկատ զադօն վրէս էնէնց բղաւի, (Ման զալով:) էն հանգի խօսկիր ասէ... (Հայերումը ուղղվում է:) ԲՇշացաւ, բՇշացաւ աշխաքի բանը... (Հնոանում է հայելից:) Պարտ իս, կ'օսէ... Գժվիլ է... ինչ պարտկ, ինչ փլաւ, ինչ փստան... Ո՞վ ասաւ, վուր պարտ իմ... Թէ պարտ իմ, ինչի ինչկի էսօր յիդ չիմ տվի... Ես նրան վուր տամ, մէկէնելուն ինչ ասիմ... նրանք ինչ գէթ ին արի... 2է, (Կատում է:) վունչիչ պարտ չիմ... սուտ շնորի ին մօգօնում... Թէ պարտ իմ, ինչի բարաթ չունէ... Վմուրդի է... մի ունէ... ինչ բարաթ... Բարաթ չկայ... զնացիլ է... ջնջվիլ է... թէ չէ էլ ինչ օրութին է... Ամա էն լօթի պաժարնին պիտի ամեն տիդ բղաւի, վուր փաւդ իմ պարտ ու յիդ չիմ տալի... (Վեր է թուզում տեղից:) 2է, չէ, էփէմիէն զըստ է ասում... Պիտի 'ես բղաւիմ, 'ես պիտի հարայի տամ, աշխաք ու 'երգիր զարթեցնիմ, վուր ինձ՝ ինձ պէս աղա մարթուն էսէնց անպատիւ արին, էսէնց շնորի ին գցում վրէս... Մուլափ, 'ես քիզ կու շանց տամ, լօթի պաժարնի:

Գուրս է դնում ձախ դռնից,

Վերջ երկրորդ ԱՐԱՐՈՒԱԾԻ

## ԱՐԱՐՈՒԱԾԻ ԵՐՐՈՐԴԻ

Առաջին արարուածի սենեակը, միենոյն ձևով կահաւորած և զամբը թոկի վրայ փառձ: Առաւոտ է:

## ՏԵՍԻԼ Ա. Ո. Ա. ԶԻՒՆ

ԿԵԿԵԼ, մենակ, տախտի վրայ նստած, լուր կարում է, ապա մութարի վրայ դրած կարի բօխչից վերցնելով մի կտոր, շարունակում է կարը եւ հետն էլ երգում:  
 «Սիրելիզ, ինձ ատել ես,  
 Ստել ես, նախատել ես,  
 Ջիգարըս կտրատել ես,  
 Արնաշաղաղ ես արել:»  
 (Աչքերը սրբում է:)  
 «Ինձ տեսնելիս տնկը բարով,  
 Խմբհուրդդ տսա գրով:»  
 (Լացի ձայնով:)  
 «Ինձ իսօ մորթել չես սրով՝  
 Անսուր մատաղ ես արել:»  
 (Կարը թողնելով՝ լաց է լինում:)  
 Ախ, Աստուծ, 'ես էլ կօսիմ թէ աթմորթի իմ...  
 Ինչի ստիղծեցիր ինձ, ինչացու իմ աշխաքումը. ան-

միդ գեղնի էրեսին տիդ իմ բռնում... ին ուփրօ լաւ  
չի ըլի՛, վուր գեղնի տակն ըլիմ ու գերեզմանս վուտի  
տակը կնխշբառմ ըլի՛ն... ինչը շիս սպանում ինձ,  
Աստուձ... Դուն իու լաւ գիրիս, վուր մահն ուփրօ  
հիշտ է ինձ համա, կանց շունչ քաշիլը... (Լոռոթիւն:)  
Զուրը ննդնիմ, թուկով խիստվիմ, գանակ ցցիմ սըր-  
տամմա. ինչ ջուղար տամ Քիդ... (Լաց է լինում:) Աս-  
տուձ, Աստուձ, եա կէծակ վէր զցէ զլիսիս, եա  
կարմնջի վրայ անց կենալիս կարմունջը փնու ածա-  
վուտիս տակը, եա գեղնին ման գալիս, գեղինը  
պմտոէ ու ինձ դէվէր տար...

Լաց է լինում:

## ՏԵՍԻԼ Բ

### ՆԱ, ՇՈՒԾԱՆ

ՋՈՒԾԱՆ, ներս մտնելով ծախ դռնից:  
Էլի լաց իս ըլում, Կէկէլ:  
Կէկէլ, աչքերը սրբելով:  
Զարթնի լացը՝ ինչ է մնացի ինձ, դէդի... իս  
արտըսունքն էլ վուր շըլի տվի Աստուձ, սիրտս ին-  
չով հովնիմ:

Կարը զցում է տախտի վրայ:

### ՋՈՒԾԱՆ

Ախար, Էտղադա արտըսունք կու՛լի, վուրթի. իո  
քամկեցար իստակ:

Կէկէլ,

Յաս ինչ անիմ, դօշիս հէնց գիրիմ աղաքար է

պառկած... իս արտըսունքն է ինձ օտկում մէ քիշ,  
թէ չէ դարդու խիստավում իմ:

### ՃՈՒԾԱՆ

Դարդ ցաւի գայ ու Աստծու պատիժի էն սիւ-  
սրառվը: Աժէ՛, վուր Էտղադա դարդ իս անում նրա  
համա:

### ԿէԿէԼ

Աշխըքումը բէզնամ էլայ, գլուխս զուս կարվե-  
ցաւ, էլ տօլի ու սծօրի էրեսին չիմ կանացի մտիկ  
տա. իս մպրի է:

ՃՈՒԾԱՆ, նստելով Կէկէլ մօտ անոսի վրայ:

Մի դասդ անի, Կէկէլ ջան, մի դարդ անի. Աս-  
տուձ օղորմած է, կուլի նրա վրա լաւ մարթու է  
ուստա բերում քիդ:

### ԿէԿէԼ

Մարթու աճկն էլ կարիմ. նրանք խճպտանք ու-  
նին, նրանք հնքի ունին... ինձ պաշ արաւ ու իմ  
պաշը տարաւ մւրիշին էրիստ... (Գլխին խփելով:) Գի-  
պինը պատոէ ու ինձ դէվէր տանէ: էլ, 'ես 'երգնքի  
էրես վանց պիտի ահսնիմ:

### ՃՈՒԾԱՆ

Երա, դուն վուր էտունք իս անում, Կէկէլ, 'ես  
ինչ անիմ... (Լաց լինելով:) Միխկը չիմ. բաս 'ես  
վունց դիմնամ՝ իմ սիւ ու մութ օրին մէ կուռը, քիզ  
մէկէլին... իտ հանգի օրինակնիր շատ է էլի, վուրթի.  
մինակ միզ համա խօ չէ սափեծած աշխարքը: Քանի  
միզպէսնիրը կան, քանի միզ վրայ վմտթարն ասա,  
հացի հասրաթ ածած ին, մէ թիքա հացին էրնէկ  
ին տալի, դանէ զուռը ախտութիւն ին անում ու

Էն թիքա հացը՝ թէ հազրէնը մէկը տալիս է, մնացածնիրը կի՞նծումը խփելով դուս ին անում... Միզիսօ Սստուձ մէ թիքա տվիլ է. փառք իրան, ինչ անիս, հալբաթ միր ճակարին էս էր զըած։ Ելի փառք տանք իրան, աղանշանք անինք, վուր էստու վրայ վատթար օրին չուսստ բերէ միզ. իմ Պէպօին ջան տայ, վուր ինչ թիքա միզ տալիս է նրա ձեռով, էն թիքէմէն էլ չզրգէ միզ։

ԿԵԿԵԼ

Երնէկ Սստուձ ինձ մահ տայ, ուրիշ վունչիշ շիմ ուզում։

ՃՈՒՂԱՆ, մօտենալով եւ զրկելով ԿԵԿԵԼԻՆ։

Մի ասի, մի ասի, ԿԵԿԵԼ ջան. (Նստելով կողքին։) միխիլ է Սստուձ մօդ, գենացվալոս դէղէն։

ԿԵԿԵԼ, Շուշանի զրկում։

Ալս, դէղի ջան...։

Լուր լաց են լինում։ Տեսարան։

ՏԵՍԻԼ, Գ

ՆԲԱՆՅԻ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ, ներս մտնելով զիմացի դռնից զլխարկով եւ ձեռնափայտով։

Վա, օխնած հոքիք, զարթնի էտ՝ բան ու զուրձ չունիք։

ՃՈՒՂԱՆ, Թողնելով ԿԵԿԵԼԻՆ, կանկում է։

Ուրիշ ինչ բան ու զուրձ պիտի ունենանք. թէ զուզիս՝ դուն ծափ տու, մինք խաղանք։

ԿԵԿԵԼ, վերցնելով կարը։

Վայ իմ օրին...։

Աչքերը սրբելով՝ շտապով դուրս է գնում աջ դռնից։ Կարի կիսաբաց թօխան մնում է մութարի վրայ։

ՏԵՍԻԼ, Գ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ

Է՛, լաւ է, ձիր հօրն օպպրմի. աթմորթին էլ մէ քիշ համփիրութին պիտի ունենայ։ Ախար, մէ զլուխ զիփ լաց իք ըլում, խան մէկն ու խան մէկելը. էտէնց վմւնց կուլի։

ՃՈՒՂԱՆ, նստելով տախտի վրայ։

Ի՞նչ անիս, ինչ միր գլխին բան էկաւ, Սստուձ միր դուշմընին էլ շտայ։

ԳԻՔՕ

Սստձու բանը դուն չիս զիգի, զուշան, ուրիշ հանգն է սարքի աշխարքը. ուրախութենի հիգ զարդ է տալի մարթու ու զարդի էղնէն ուրախութին... (Առաջ բաշելով աթոռը նստում է տախտից փոքր ինչ հետու եւ բթախու բաշում։) Հըմ, է... (Երկու ձեռքի ցուցամատները միմանց կացնելով։) Էսէնց է, այ. քուր ու ախպէր։ Վունցը քուր ու ախպէր մէկսմէկէմէն չին բաժնվի, էնէնց էլ ուրախութինն ու ախբութինը։

ՃՈՒՂԱՆ, առանձին։

Քու անկն էլ։

## ԳԻՔԾ

Ջատ լու է շինի, է... Ասում է մարթուն՝ էսքիզ  
ուրախութին, գնա, քէփ արա, ասում է. իժում էն  
քէփումը մէկ էլ տեսնիս մէ դարդ է լուս զցում միզ  
համա, վուր ինչ է՝ հըը՛... իրան չմտէն դցինք...  
Գոհանամ Քիզ, Աստուծ:

## ՃՈՒՃԱՆ

Էրնէկ գիղենամ՝ բա զրօս քարոզի վուխտ է:  
ԳԻՔԾ

Մնլափ, Զուշան, մնլափ. ալսար, դուն շիս գիղի  
